



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



לטן

902

X

1999



ՀՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

ՀՆԾԱՅԻ

---

Փարիզ, Տպագրութիւն Ա.րմ. Ի Տպար. Վալտերի:  
Paris. Typ. Arménienne de Walder, r. Bonaparte, 44.

---

24/6

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԸՆԾԱՅԻ



ՍՏԿՈՎ, ԿԸ ԾԱԽՈՒԻ — ՋՐԻ ՉԸ ԲԱՇԽՈՒԻԸ.

Գին. 4 ֆռանք



Փ Ա Ր Ի Ջ

1856

29. 904

4 gar-les





Սկիզբն եւ վերջ ընդունելութեան:



## ՅՍՌԱԶՍԲԱՆ.

Այս անճոռնի զրքուկը հրատարակենլէն առաջ ամէնահարկաւոր մտածմունքս սն եղաւ, Թէ ինչ ճամբով կրնամ Ընծային չը հետեւիլ. խելքս միտքս մանաւանդ առաջին փափաքս այն էր որ սն զրքուկս չը ծախուի :

Երկու առարկութիւն ելաւ առջեւս, առաջինը Ընծային ըսածն էր, եւ այսպէս.

« Հայք ուսումնաստեաց են եւ  
« կարդալ չ'են գիտեր, կարդալ  
« գիտցօղը գնել չ'ուզեր, քանի  
« մը գնօղնէր կան անոնք սլ

« առանց գրքին երեսը տեսնելու  
« բանի չ'են հաւնիր (չը գնելու  
« մտօք), հաւնօղնէրն ալ սովորու-  
« թիւն ունին ստակը կանխիկ չը  
« վճարելու. ասոր վրայ կ'եննեն  
« սլայման մըն ալ կը գնեն որ  
« այն գիրքը կարդալու համար  
« կորուսած ժամանակնուն վարձքը  
« վճարուի հեղինակին քսակէն :  
« Կաւ, ըսենք թէ այս այնպիսի  
« իրաւունք մըն է որ մարդ ըլլօղն  
« ունենալու է. բայց գիրքը լը-  
« մընցունելու համար տարինէր  
« կը գնեն, մն ինչ ընենք. ամէն  
« օր ալ կը գան' այս ջափ տող  
« կարդացիներսելով' ողջ օրական  
« մը կը սահանջեն. կան այնպի-  
« սինէր ալ որ չ'ընթերցած զըր-

« քէրնին ( իբր ժառանգութիւն )  
« զաւելընէրնուն կը ձգեն . այսպի-  
« սեաց մէջ տեսնուածնէր ալ կան  
« որ անով աղջիկնին կ'օժտեն եւ  
« իբրեւ օրական եկամուտ ' փե-  
« սէրնունմէն ստորագրութիւն մը  
« կ'առնեն որ հեղինակէն ընդու-  
« նածնին գինետունը չը ձգեն :

« Ասով յայտնի կը տեսնուի որ  
« հայ ընթերճասիրաց դժոխային  
« սրայմաննէրուն կարելի չ'է դի-  
« մանալ :

« Ասանկ անել խորխորատէն  
« ազատելու համբան սն է . ինչ .  
« Ընծայ . ստկով չը ծախուիր , ճրի  
« կը բաշխուի , այսինքն ճնապա .  
« (Տէս Ընծ . էջ 181) : »

Այս դրութիւնը գէշ չ'էր , բայց

իմ բանիս չ'էր իգար . վասն զի  
Ընծան, իր միտքը դրած էր որ զրքի  
մը առաջին պայմանը ծախուիլն է,  
իմինս անոր հակառակն էր . ուստի  
երկրորդ առարկուածեան մը վրայ  
պէտք էր մտածել :

Առջի բերանը միտքս դրի որ  
էլնեմ օրինակին 1855 Փռանք, զին  
դնեմ . ասկէց անդին սքանչելի  
արգելք չ'էր կրնար ըլլալ զրքու-  
կիս ծախուելուն . Սատանան եկաւ  
ակնջէս ի վար « խենթ մը կ'էլնէ  
կը գնէ, ան ատենն ինչ կ'ընես »  
ըսաւ ու զնաց . մտածեցի որ այս-  
պիսի խաղքուպատառ զրքի մը  
պատճառաւ ' ազգայնոց մէկին  
ծոցէն այսչափ գումար մը կրնայ  
դուրս ցալծքել ու նպատակս արգի-

լել. ան ալ չ'եղաւ՝ ըսի մէկ դի  
քաշուեցայ :

Եւ որովհետեւ միտքս զրած էի  
կարելի եղածին չափ Ընծայէն  
հեռանալ՝ միանգամայն այնպիսի  
ճամբայ մը բռնել՝ որ ընթերճա-  
սիրաց մէկն ալ չը համարձակի  
գրքուկս գնելով խենթութիւն մը  
ըրածի պէս պարծենալ . սն մտա-  
ծեցի որ այս գրքուկիս մէկ ծայրէն  
մէկալ ծայրը, մջէն տող մը դուրս  
չը ձգելու պայմանաւ, թղթով եւ ընդ-  
ամէնն, 4 Ֆոսնքի, ձգեմ երթայ :  
Այս աղեկ մտածմունք է բայց ծա-  
խուելուն բաւական արգելք չ'է .  
ուրեմն պարտք մըն ալ կը մնայ  
վրաս , եւ ինչ . խրատ մը տալ ըն-  
թերճասիրաց որ մէկը չը գնէ՝

զոնէ առ այժմ. եւ յիրաւի, ինչ  
հարկաւորութիւն կայ ելնել այս-  
պիսի խայտառակ զրքին ստակ  
վճարել՝ կարգալու համար ալ ժա-  
մանակը կորուսընել. կրնայ ըլլալ  
նաեւ որ զնօղ ընթերճասէրն այն-  
պիսի տեղ մըն ալ գտնուի ու Սա-  
տանին յարելով ելնէ մէկին դի-  
մացն ալ կարգալու ստիպուի. եւ  
այնպէս՝ թէ ստակը, թէ ձայնը եւ  
թէ մտիկ ընօղ անձին ժամանակը  
ոչնչացնելու պատճառ ըլլայ .  
ծուռ շիտակ կամ աղեկ քէշ կար-  
գալուն համար ընդունելիք ասպ-  
տակներն ու կիցէրը վերի հաշուս  
մէջը դնել չ'ուզեցի :

Ասոնց ամէնը մէկ դի. ինչ հարկ  
կայ մարդուս առաջուց ելնելու եւ



այսպիսի գրքուկ մը գնելու՝ երբ  
մանաւանդ ապահով կըրնայ ըլլալ  
օր աւուր աժընճալուն վրայ .

Ի՞նչ կ'ըսես Ընթերթասէր :

Այս ալ մէկ դի . ամենեւին  
չը գնես նէ ինչպէս կ'ըլլայ .

Թո՛ղ որ նպատակիս հասնիմ՝  
Ընծան ալ ինչ ուզէ ըլլա՛ն :

Թ. ԿԸԿՈՒԻԿԵԱՆ .

---



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

## ԸՆԾԱՅԻ



Ա.Ի.Ե.Լ.Ե.Ս.Յ 18, կէս դիշերէն ետեւ ժամը երկուքին, դռանը չալուիլն ու վար վազելս մէկ եղաւ, ուր անհամբերութեամբ կ'սպասէի մանկաբարձ կնօջը գալուն եւ ուր կեցեր կը լսէի Նփրատ հանրմ դրացուհոյն տքալու ձայնը՝ որ տղաբերքի ցատէրուն տակը ճըվիկ ճըվիկ կը գար • սանդուխէն իջնալս ու դուռը բանալս ակնթարթի մէջ կատարեցաւ • մանկաբարձին երեսը չը տեսած՝ հրամէ՛ Պիրիճիկ խաթ... բառին կէսը բերնէս չ'եւլած,

« Ա՛ռ քեզ իշխանութիւն եւ զօրութիւն »

ձայնի մը հետ, շրոտաք'... «աս ալ իմ»  
փաթաթըռաք'..... «վարտիկիս լուացող-  
ջէքին փոխարէնն է» ըսաւ ու բաճկոնիս  
ծոցը բան մը դիմեց. մընաս բարովին  
ու դռանը գոցուելուն ձայնը միատեղ ա-  
կանջիս հասածին պէս, աման Պիրիճիկ  
խաթուն ըսի, շուտ ըրէ վեր ել' իմին  
քթիս արիւնը մի' հողար, ես ամէն բան  
պատրաստեր' աղն ալ քիւերին դռանը  
քովի պտուկին մէջն եմ դրած, վազէ'...  
վազէ' ճանըմ ինձ համար հող մի' տանիր.  
դիտեմ որ զիս շատ սիրելուդ համար դար-  
կիր այդ ապտակնէրը, որոց ձայնէն ամէն  
չար հողինէրն ու քընդմեզ աղեկնէրը կը  
հալածին եւ ուղոսը է. հայտէ' կըսեմ նէ  
կինէ... ճանըմ գնա' հիմա գնա'... հիմա  
քիթս արունեցաւ տէյի չը մեռայ եա',  
գուցէ բարեգոյն նշան մըն ալ ըլլայ  
երախային ծննդեան :

Շապիկիս թեւէն սկսաւ (զի դեռ չէի  
հագուած) այնպէս ուժով քաշել որ ձեռքս

ոյժ չը մընաց երեսէս սահեցաւ... աչքս  
բացի . հա՛վ հա՛վ, Տիօն սկսաւ հաչել,  
ետեւէն, շաք՛ շաք՛ դուռը . հա՛վ հա՛վ  
հա՛վ . հերի՛ք Տիօն, ահա պիտի բանամ .  
հա՛վ . հիւ՛շտ . հիմա Պիրիճիկին կըսեմ  
ու ծեծը կ'ուտես հա՛ . շաք՛ շաք՛ շաք՛ .  
է՛յ եկայ ըսինք եա՛ :

— Բարեւ . այ՛ հոգիս բերանս եկաւ  
հոգի՛ .

— Աս ե՞րբ դուրս ելար .

— Ժամ ու կէսէն աւելի է հոգի՛ . մին-  
չեւ քովի դռան առջեւն եկայ . տնէն  
մինչեւ հոն կարծես թէ բան մը պակաս  
էր վրայէս . եկաւ եկաւ ու վայ՛ խելքիս  
հոնտեղը միտքս ընկաւ :

— Ի՞նչ կ'ըսէս .

— Հասցա՛ . նորէն յետ դառցեր ու  
մինչեւ տնակս դացեր եմ . ժամ ու կէս  
է որ կը դալեմ հոգի՛ . այ՛ հոգիս ելաւ  
այս թէրմաշ ընծային համար . մեղայ ,

մեղայ՝ չար սատանան գիշերով զիս  
մեղքն ալ խոթեց — :

Քանի մը ստք յետ քաշուեցայ երեսնէրս  
ալ ձեռացս ետին ապաստանելով հար-  
ցուցի . — Ի՞նչ է Պիրիճիկ խաթուն, ընծան  
ի՞նչ է, ե՞րբ գուրս ելար . բան մը չ'եմ  
հասկընար ի՞նչ ըսել կ'ուզէս .

— Իշուն պոչը . քեզ ո՞վ մարդու տեղ  
կը դնէ կը խօսի . նայիմ վրադ կը փոխե՞մ .  
աման հիմա կը մարիմ հողի՛, սա ընծան  
բռնէ՛ որ Ֆէրաճէս հանեմ . այ՛, սա  
քրտինքս նայէ՛ .

— Հա՛վ հա՛վ, հոռո . հա՛վ .

— Այ՛ այ՛ այ՛, հասէ՛ք . սուրբ ընծայ  
սակունքդ պաղնեմ, մորուքիդ թէլէ-  
րովը փրփրիմ իս ազատէ՛ աման բաղէ... .

— Հիւ՛շտ՛ իւշ՛, Տիօ... չ'է մարիկս մի՛  
վախնար, մեր Տիօնն է, նայէ՛ ներս մտա .  
նա՛ վրայէն ալ դոցեմ որ ամէնեւին  
ապահով ըլլաա .

— Քա՛ մեղայ հիմա շո՞ւնս էր պակաս ,

կաթն մածուն վարտիկս ալ ջուր կտրեցան . վայ՛ խելքիս, ես ալ ելեր ձեզի պէս ճնճոցնէրուն եկեր ու մեռելկոխ կըլլամ . ելնեմ բանս երթամ .

— Աման Պիրիճիկ ոտքիդ տակը մեռնիմ ատանկ բան մ'ընէր .

— Քա հոգի՛ լեղատգատառ եղայ նէ .

— Գուրս ելածիդ պէս Յփրադ հանըմը կը մեռնի գիտցած ըլլաս .

— Ֆէրաճէիս ծարէն ալ՞ խածաւ ի՞նչ ըրաւ .

— Չ'է մարիկս, անոր սովորական գգուանքը հաջել է, նա՛ սա պուտ մը ջուրը բերանդ առ նայիմ .

— Քա վայ՛ մեղքիս՝ սիրտս խառխըղին դառցաւ .

— Լուսընկայիդ առջելիկը կախուիմ մարիկս վեր ել, հիմա կեւնէ կը մեռնի տունիկս կը մարէ .

— Սա փօստալնէրս քաշէ՛ որ ելնեմ .

— Հրամանս ըրէ երթամ լաթին տաշ-

տը պատկիմ խաթունիկըս, ինչո՞ւ չէ .

— Ընծան ձեռքս ըլլալէն ետեւ բանէ մը չ'եմ վախնար բայց կին մարդը միշտ տկար է թէ եւ մանկաբարձ ալ ըլլայ :

— Սյն չափ հաջելուն պատճառը՝ դուրս ելնելէդ առաջ ինծի ապտակ դար ներլդ է, եւ կարծեմ տեսած պիտի ըլլայ, չ'է նէ խելօքիկ շուն մըն է . բայց ի՛նչ պէս գացիր ու արագ դառձար, մինչեւ հիմա կը դարմանամ, եւ սա ընծայ ըսածդ ի՞նչ էր առաջ առաջ ան հասկըցուր նայիմ :

— Վօւյ՛, ճաղը կոնակս անցնիմ . քա՛սա ի՞նչ ափեղցփեղ կը խօսի, խենթ է՞ ի՞նչ է, առ է՞ր հիմա սպակասըս . ես քուկին խաղալիքդ չ'եմ . ընծայ ըսածս սա գիրքն է . դուն մի՛ հաւատար ու ծաղր ըրէ որ գլխուդ փորձանք մը դայ . ինտոր՞ ալ այդ խօսքը բերնէդ ելաւ լեզուդ չը կապուած . մեղայ՛ ըսէ ու վեր ել որ հրաշք տեսնէն աչքդ . աշխրհքիս մէջ



քէնէ դատ անձ մը կայ՞ արդեօք չը գիտցօղ, ընտոր՞ ալ չառփըլմիշ չ'եղար, ընծային աչքին մեռնիմ... Եկած ատենդ, Ապտակ գարնեդ ըսելով ի՞նչ կիմանաս. պարէմ քթէդ ալ արիւնը չը վաղէ մըրս ի վրադ՝ — :

Զայնս խփեցի եւ ըստ ամէնայնի շփոթած Վէնէտիկցի օտարականի մը պէս քծնելով ետեւէն վեր ելայ :

Մանկարարձը ներս մտաւ ու գնաց այն ընծայ անուն գրքուկը տղածղանին քթին՝ անդամ մը դպաւ չը դպա՝ երախան աշխարհք եկաւ. ընծան պաղնէլէն ու ճակտին գնելէն ետեւ, ինծի դառձաւ ու ըսաւ :

— Հիմա տեսար՞ ընծային դօրութիւնը Պարոն անհաւատ — : Պիրիճիկ ասդին չը նայած արդէն ծունկէրս գետինը դրած ու գլուխս կախ՝ թողի եւ սարաափի մը մէջ էի, շնչառութիւնս բոլորովին կտրուած, պուկս աւելի մը կոթ կեցած,

մատնէրս մէյ մէկ այդանի մէջ, ճիտէս  
ի վար Սիմոնի նիւթական վէմը կախ-  
ած, Սեղբեստորոս ալ կռնակս ելած իր  
դաւազանովը սկսեց մի՞ գլխուս կոփել...  
ալ ինքզինքս Սաղայէլին հետ յերկնից  
յանդունդս գժոխոց ճամբուն մէջ կարծե-  
ցի, չեմ գիտեր թէ հողիս վրաս՞ էր .  
ճամբան գլխովար՞ գլխովեր՞ չէ նէ քո-  
վընտի կը քալէի, մէկ անգամ միայն  
աչքս բացի ու դոցեցի, հասկընալու հա-  
մար թէ դէպ ի վեր՞ չէ նէ դէպ ի վար  
է երթալիք տեղս :

Հասկըցայ. մթնոլորտէն դուրս եմ ելեր,  
անդին ալ վեր վար չը կայ եղեր...

Քիթիս բերնիս բան մը իջաւ, հողիս  
մարմընոյս մէջը գտայ, ամէնքը վրայէս  
հալածեցան՝ մինակ մընացի. քիթիս ար-  
իւնը կրկին սկսեց պոռտքալ, ականջէս  
ի վար ընծայ բառը մէկն արտասանեց  
ու աչքս բացի քիթիս արիւնն ալ կտրեցաւ.  
վախէս գլուխս վեր չ'առած աչացս ծայ-

բովը մէյ մը նայեցայ ու տեսայ որ՝ երեք Արմէնուհի, չորս Թրքուհի, վեց Յոյնուհի մէկ ալ Պօլիճա՝ եկեր բան մը կը խօսին .

Պիրիճիկ խաթուն անոնց պատասխան չը տուած քովիկա եկաւ երկու ականջէս բռնեց ոտքի վրայ կայնեցուց եւ ըսաւ .

— Երեսս նայէ՛ . պատիժդ ու վրկութիւնդ տուողն ընծան էր, աշխարհք մէկ ըլլան արեւին ճառագայթնէրը չ'են կըրնար արգիլել . ճշմարտութիւնն ալ արեւին պէս է եւ միայն ընծային մէջը կը շողշողայ, քեզի ի՞նչ կըսէկոր՝ ա՛ն մտիկ ըրէ, անոր ետեւէն դնա՛, բայց դուն երթալ չ'ես ուզեր եղեր՝ աշխարհք կ'երթայ դուն մինակ կը մընաս, բայց անոր ճամբան քու աչքիդ ծուռ կ'երեւայ եղեր՝ աս ալ անոր դիտնալու բանն է, թէ եւ ծուռ ալ ըլլայ ըսածը՝ իր մտքին դրածն է եւ պիտի ընէ՛ ճարը չը կայ . ան մեծ՝ դու պղտիկ . աշխարհք անոր ասին է քու աչիդ

ընծայ մ'ալ չը կայ : Գ՞ուն ով ես ....

Վերջապէս խորհրդածութիւն պէտք  
չ'է, ծովն ընկիր ըսէ նէ մի' տնտընար  
դնա', բայց պիտի խեղդուիս եղեր' վնաս  
չ'ունի, հինգ օրէն վերջն ալ լողալ սով-  
րեցնելու կարօղութիւն ունեցօղ ընծայ  
մըն է այս օրուան օրս, տարակուս չը  
կայ որ դուն ալ կրնաս վերջապէս խա-  
ղաղութեամբ ծովեզերքն ելնել' առանց  
ոտքդ ու թեւէրդ շարժելու :

Գնա' հիմա գիտցածիդ պէս պատմէ եւ  
զգոյշ լէր եղած հրաշից վրայ, քանզի  
ընծան մարդոցմէ փառաւորուիլ չ'ուզեր,  
մանաւանդ այս օրէրս որ մէկ ոտքն ալ  
անդին երթալու վրայ է — :

Խօսքը լմընցուց ու հիւրէրուն, դարձաւ  
ետեւէն մօտեցայ միտքս դնելով որ մեռ-  
նիմ ալ նէ, սա ընծային ի'նչ ըլլալն իմա-  
նամ ու աչքս դոց մեռնիմ ... խօսքս բե-  
րանամընաց . վերի կըկտոց ամէնքը միա-  
բերան սկսան պոռալով Պիրիճիկին վրայ

Թափիլ իրենց տունը հրաւիրելու համար .  
իւրաքանչիւր կին այնպէս միտքը դնելով  
եկած էր որ է՛ն առաջ ինքն առնէ տանի .  
ասոնց , որուն ջրպահին մէջ (քիւփ) մուկ  
ընկեր է՛ զայն մաքրելու համար , որուն  
երկանը պոչը ծռեր է՛ զայն շտկելու  
համար , որուն պորտն ընկեր է՛ վերցը-  
նելու , որուն տանը ժամացոյցն է զադ-  
րեր՛ քալեցնելու , որուն մլուկնէրը  
(Թահտա - պիթի) ջնջելու . ո՞ր մէկն  
լսեմ , մջէրնուն մէկն ալ անկողինն է  
թրջեր՛ չորնալիք չ՛ունի :

Ասոնց մջէն ամէնէն աւելի պոռոչ-  
վըտողը Պօլիճան էր , երիկն ալ տա-  
կառ մը սառտեղա կռնակն առած՝ գռեհին  
մջէն վամօզախառն եւ այլանդակ ձայն  
մը ձգեր ու տունս ի վեր կը պոռար :

Պիրիճիկին ճարը հատաւ՝ ելաւ հրէային  
մօտը դնաց , միւսնէրն ալ Պիրիճիկին  
ետեւէն ( հարկ չ՛է ըսել թէ զգեստին  
ծայրէրն ալ բանուած էին ) :

Նախ՝ այս հրէային տակառ մը սառտե-  
լան հոտած էր. երկրորդ՝ գլուխն որդնո-  
տած. երրորդ՝ քթին ծակէրը բազմաթիւ  
ոջիլնէրով պաշարուած, այնպէս որ  
ներսէն բան մը հանել եւ կամ դրսէն  
խոթելը մտածելու բան չ'էր. ասոնց  
վրան կ'աւելցունէր մեր բարեպաշտօն  
հրէան թէ կը փախաքի եղեր որ Պիրիճիկ  
խաթունը իր տունն երթայ ամիսը գոնէ  
վեց անգամ ու ճենճոտ լաթէրը մա-  
քրէ՝ ընծայիւ եւ ոչ կաւով :

Ասոնց ամէնը պատուհանէս լսեցի,  
սառտեկեան հրաշքն աչացս երկուքովն  
ալ տեսայ և կարծես թէ, (մեղքս ի՛նչ  
պահեմ), հիմա նորէն աչքիս առջին  
կէցեր է. եթէ դիտնամ որ աշխրհքիս մէ-  
ջը կարդացող գրօղ սառտեկանէր կրնան  
դանուիլ՝ պիտի համարձակիմ ըսելու թէ  
մէկն ալ ելաւ ատենարանութիւն մը խօ-  
սեցաւ ու ընծային տողերէն քանի մը  
հատն ալ բնարան դրաւ. բայց մեղքն

առնել չ'եմ ուղեր, կարելի է ուրիշ կեն-  
դանի մ'եղած ըլլայ :

Այս գործողութիւնը լմբննալէն յետոյ՝  
հրէան գլուխը բացաւ ընծային տակը  
դրաւ մէկ ձեռօք ալ պօնէթան բերաւ ըն-  
ծային վրայէն խփեց, կից մըն ալ Պիրիճի-  
կին դարնեղն ու կծիկը դնելը մէկ եղաւ .  
այն միջոցին պատուհանս կիսախուսի ըրի  
ու վար վազեցի որ Պիրիճիկին հետը սա  
ընծային վրայով աղեկ մը քօքս լմբն-  
ցընեմ . տանս դուռը բացի . զորքեր ես նէ  
գտիր :

Երկու ժամէն կտօր մտնէ ոիկի մը  
ձայն առի որ կը պոռար դռնէն իրուն մէջ  
ու սա բանէրը կ'ըսէր .

« Պիրիճիկ խաթոյնը խելքը թռուց .  
« Պաղլաթախօղ կնօջ մը հրամանաւ՝  
« բակին մէջտեղը պառկած, եւ հասուն  
« տանձի մը կոթով դժուած շրջանի մը  
« մէջ կը գտնուի առ այժմ . այս դար-  
« մանաւ՝ բժիշկնէրը մեծ յոյս կը տան,

« Փրկչի դռնէրը բացուիլէն առաջ առող-

« ջարհներու :

« Խախամ-Պաշին վար առին, Էսթէ-  
« ուլան (մեր տուն եկող Պուլիճային  
« անունն է) անոր տեղը դրին :

« Մեծ Սինակոկայէն Մովսիսական տախ  
« տակը՝ Քատիշ եւ Ա.Քրառա աղօթքն  
« ըսելէն ետեւ՝ դուրս նետեցին եւ անոր  
« տեղը Ընծան դրին : Հրէից ժողովուր-  
« դը ջերմ եռանդով մեծ Սինակոկային  
« մէջ հաւքուած՝ նոր Խախամ-Պաշուհի  
« Էսթէուլային ու բոլոր Սինովայակա-  
« նաց հետ միարան եւ միահամուռ ճայ-  
« նիւ՝ երեսնին կապերտով ծածկած  
« զլուսնին ալ տակառ մ'անցուցած՝  
« խորանին առջեւը տասն անգամ այս  
« պէս երգածայն աղաղակեցին .

« Շրման Իսրայէլ, ատունայր Էլօհնօս,  
« ատունայր Էխատ :

« Այնուհետեւ ընծային չը հնազան-  
« դողներուն դէմ որոշեցին որ ամէն շա-



« բաթ, Սինաիօկայից մէջ, Ամօռա եւ  
« Մէխօւռամ կարդացուի .

« Խախամ-Պաշուհին ցուցամատուր դէպ  
« Ընծային շտկելով ,

« Վեանավթա լեռեանիսա քամօխա  
« մըրմընջեց ու ժողովուրդն արձակեց :

« Անհրաժեշտ եւ անժխտելի հարկի  
« մը պահանջմամբ՝ մեծ Հայոց Պատ-

« րիարքարանին դուռը տանիսին վրայ  
« հանեցին . այս դուռը դէպ ի յարեւելս

« պիտի բացուի եւ յարեւմուտս պիտի  
« գոցուի . առջի դռանը տեղն ալ Ընծան

« դրուեցաւ, եւ այս օր 8467 դորձաւորք  
« անոր հովանոցը շինելու պաշտօնին

« արժանացան :

« Սմէն Հայք հրաւիրեան են օրն երեք  
« անգամ Ընծային առջեւէն գլխիվար

« եւ ոտքիվեր անցնել ու շիպ շիտակ  
« Փրկիչ երթալ . վայ՛ անհնազանդին :

« Յոյն եւ Հայ եկեղեցեաց մէջ Ընծայի-  
« նէն ուրիշ պատկերի մը նայողին երե-

« սըն ետին դէպ ի յարեամուտս պիտի  
« ուորի եւ անկէց պիտի ճանչուին Ըն-  
« ծային հակառակորդքը :

« Հրաման չը կայ Յունաց առ Այիօսս  
« խավեարիս մտղթել' առանց փայտէ  
« դրդալի, առանց խտորի եւ թքօտ դը-  
« րամ մըն ալ Ընծայի պատկերին երեսը  
« վակեցնելու. Յունաց Պատրիարքարա  
« նին դուռն ալ այսուհետեւ վարէն պի-  
« տի բացուի ու ներսէն կամ վերէն չը  
« պիտի գոցուի :

« Պօլսոյ աքաղաղները դատապար-  
« տեալ են իրեք ամիս չը խօսալու շը-  
« նէրն ալ չը հաչելու. այս վերջիննէ-  
« րը շարաթն անգամ մը գոնէ 168 ժամ  
« կոնակնուն վրայ պառկած ոտքէրնին  
« դար վեր' ծոմ պիտի կենան մինչեւ  
« ի պայմանեալ ժամանակ, մէկ աւուր  
« մէջ եօթն անգամ թաւազլորողաց ար-  
« տօնութիւն տրուած է օրն երկու ան-  
« գամ Ընծային ետեւի կողմէն երեսն ի

« քով բարեւելու անգամ մըն ալ հաչելու » :

« Հարկ չը կայ Թրքաց Ընծայի ձախ  
« կողմէն անցնիլ . նոյնպէս արգիլ-  
« եալ է թեմեմնան ընելը , բարեւատութ  
« եւ բարեւընկալք իրարու շիլ պիտի  
« նային , կուրէրն ալ պիտի խնջեն » :

Հարկ չէ ըսել որ այս մունէտիկին  
կանչելէն առաջ բաճկոնիս ծոցէն կա-  
սկոց մը դուրս ցաթքած ու ախա ընկած  
էր , Պիրիճիկին անյայտ եղած ժամանա-  
կէն ի վեր . այս կասկոցին է՛ն վրայինը  
Զա . Կեն . Վո . Յո . ՄՍ . ՆՏՍ . ԼԵՍ . ՆԻ նա-  
մակն էր :

Մեծ դարմանքով իմացայ որ ապ-  
ասակներս ( եւ այլն ) անկէց ընդուներ եւմ  
ու թեւէս քաշողն ալ մեր Տիօնն է եղեր .  
խելքս հասաւ թէ Պիրիճիկ ըսածնէրս  
չը հասկընալուն պատճառ մ' ունի եղեր ,  
բայց այն ատենը զիս չը ծեծելուն ի՛նչ  
պատճառ ունէր այն չ' եմ գիտեր :

Ընծային բանը քանի գնաց պարզա-

ցաւ աչքիս, վերջապէս « նայիմ սըվոնք  
ի՛նչ են ըսելով » սկսայ մէկիկ մէկիկ նա-  
մակները բանալ եւ սենեկիս բարձէրուն  
ու բազմոցներուն վրայ փռելով շարերը  
Քաղմաթիւ նամակներ, ո՞ր մէկը կար-  
դամ... ամէնուն մջի խնդիրն ալ Ընծայ-  
ին վըրայ կը կայանար. հաղարումէկ  
տեսակ գրէր. որը ճանճի ոտքով որ մէ-  
կըն ալ աւելի կոթով գրուած . երեք օր  
անդադար կարդացի մինչեւ որ դլուխս  
ճայթելու դռներն հասաւ. եկ ու տէս որ  
Ընծային երեսն անգամ մը՝ բայց ան ալ  
հեռիէն տեսած ու զօրութիւնն ուստի՝  
դալ կամ յո՛ երթալուն վրայ եւ ոչ երե-  
ւակայական կարծիք մ՛ունէի . իսկ այն  
չտփն ալ աղեկ իմացայ որ Հայաստանի  
դաւառաց եւ քաղաքաց մէջ քիչ շփոթու-  
թիւն չէ պատճառեր այս մեր անծանօթ  
Ընծան :

Հարց ու փորձ ըրի բարեկամացս միջ-  
նորդութեամբ եւ վերջապէս իմացայ որ

Պօլսոյ մէջ վեց հատէն աւելի չ'է մընացեր, անոնք ալ Հայոց, Յունաց եւ Հրէ-  
փոյ բարձր եւ օրէնսդրական սլաշտօնին  
դատասպարտուած՝ անկէց երերցընելուն  
կամ ո՛ր եւ իցէ միջոցաւ իրենց մօտե-  
նալուն ճարը չը կայ :

Մունէտիկին ըսածը միտքս ընկաւ իս-  
կոյն վաղեցի՝ շունջս Պատրիարքարա-  
նի դռան առջին առի. հասայ չը հասայ  
բազմութիւնը մէյ մը ետին դառցաւ, աչ-  
քիս ամպէրու պէս բան մ'երեւաց հեռուէն  
ու ցրուեցաւ, Ընծային գլուխը սկսեց երե-  
ւալ, աչքս անգամ մըն ալ թարթեցի,  
սքանչելահրաշ տեսարան... Հեղինակի  
սլատկերն ալ քովը... իսկ մօտենալու  
ճար չը կայ. ի՛նչպէս եղաւ չ'եմ գիտեր  
աչացս վրայ բան մ'իջառ ու թռաւ դնաց.  
մէկէն ի մէկ ոտքս ի գետնէ կտրուեցան՝  
քանի գնաց վեր ելայ, ելայ ելայ ելայ՝,  
որպէս թէ կը թռիմ եւ կամ օդուն մէջը  
կը լողամ, քանի վեր ելայ Հեղինակի

պատկերն ալ մեծցաւ, մեծցաւ մեծցաւ՝,  
վերջապէս մատերովը նշան մ'ըրաւ որ  
իրեն մօտենամ. դայի երկրպագութիւն  
ընեմ ըսելուս չը մընաց ականջնէն  
ձեռքը՝ գլուխս ալ բերնին քովը գտայ :

— Սպըխս՝ որդիս շատ ապրիս , Սաս-  
ւած տայ որ օր օր օր օր ամէնքը քեզի պէս  
ըլլան . դուն այս բանէրը , այս իդեանէ-  
րը , այս , վույ՛ մօն տիօ՛ , աշխարհք արա-  
րած գրչիդ ծայրով ասիիդ մէջ առնէլն  
ինչով կ'ըլլայ գիտես՞ , ս՞վ կընայ ընել ,  
ս՞վ է ան Եղիշէն կտոր կտոր ընօղն ու  
ամէն մէկ բառէրը մաղէրուն ծակէն ան-  
ցընօղն ու բոլորովին ուրիշ իդեանէրով  
հագուըցնօղը , ս՞վ է ան որ օր օր օր օր այն  
Մանօթու...

— Թողութիւն ըրէք հայր , ուրիշ բան է  
հարցընելիքս , սա ընծ...

— Սնորխօսք չիկայ՛ , քաննըվեցերոր-  
դիս մէջը նայէ ընտոր՞ տուեր եմ . ա-  
սոնք՛ նայէ՛ դաւակս դուն գրոցաշակերտ

չ'ես բայց հարցուր որ որ սովորիս, ես թե-  
վեքիլի բառ մը, մօօօ՛ն տիօ՛ տառ մը  
բերնէս չեմ հաներ, նայէ՛ ապրիս ըսա-  
ծըս կիմանաս եւ...

— Ան չ'է հայր, կուզեմ իմանալ թէ հը-  
րամանքնի՞դ էք ընծային հեղի...

— Անոր տարակոյս չը կայ՛, նայէ՛ ապ-  
րիս դաւա...

— Եղիշէին թարգմա...

— Փա՛ռէքղա՛մպըլ, ատոր խօսք մի՞  
կայ մօօօ՛ն տիօ՛...

— Ներեցէք հայր, քսանըվեցերորդ  
ծանօթու...

— Ատ ի՞նչ ըսել է, հապա՛ որդիս,  
ապրիս՛, նայէ՛ հարցուր որ որ իմանաս.

— Թողութիւն կը խնդրեմ հայր,

— Վա՛յ, ողջ կենաս տղաս ըսէ՛.

— Փարիզի Հայէրը կարծեօքս անդամ  
մը գրէր էին.

— Ապրին ամէնքն ալ ողջ կենան  
ամէն որ կը գան չը դիտցած բանէրնուն

վրայ կը հարցընեն, ես ալ, վօյ՛ վօյ՛ ,  
բան չեմ խնայեր, վօյ՛ ապրին.

— Չ'է հայր չը հասկըցար, ըսելիքս.

— Հա՛, ինչ բան որ չ'են հասկընար  
չ'են կրնար ան իդեան բռնէր նէ կը գան՝  
թէ՛ բժշկութեան, թէ՛ աստղաբաշխու-  
թեան, թէ՛ պատմութեան, ան սա բան  
կայ ճանըմ բանէր կայ որ օր չ'են կրնար  
ըմբռնել. ան գրքէրը, ան՝ ալ ընտոր՞  
ըսեմ, ան՝ մօօօ՛ն տիօ՛. ճանըմ ասոնք  
հիմա ամէն բան հօ՛ւի տէյի չեն կրնար  
կըլլեր եա՛, քըչիկ քըչիկ ամէն օր՝ ապ-  
րի՛ն, մէյմէկ բան կը սովըին, բարի ե-  
կան հաղար բարի, տանս դռնէրը բաց  
են, իրենցմէ շատ գոհ եմ բարի զաւակնէր  
են, խօսքս մտիկ կը՛նեն ապրին կ'ենան եւ

— Ատոր վրայ չ'եր ըսելիքս հայր,  
ուրիշ բան կ'ուզէի հարցընել.

— Ի՛նչ որ կուզես հարցուր տղաս, ես  
ազգին հայրն եմ որդ...

— Ըսել կուզէի թէ՛ գրեր էին Փարիզէն



որ այն բանէրը տէր Առկողենց տիրացու  
Մալախը թարգմա...

— Սո՛ւտ մօօ՛ն տիօ՛ սո՛ւտ. ծօ՛ հազար  
անգամ ըսի որ աս Փարիզի հայէրը չա-  
րութենէն ուրիշ բան չ'են սովբած, ծօ՛  
անունս գրքին ճակատը գրուած է նէ՛ ,  
անոր խօսք չը կայ՛..... գիտիէի որ այդ  
չարութիւնը պիտի ընէին, ուստի ճակ...

— Ես չ'եմ գիտեր բայց այն ճակտի  
գրուած հեղինակին անունը հայերէն չ'է՞ .

— Հայերէն , պէ՛ տէ՛յինտի՛ . հայեվար  
գրէրուն երեսն ո՞վ կը նայի Փարիզի  
մէջ, ֆռռանսէվար դնել տուի որ ամէնքը  
հասկընան :

— Ի՛նչպէս կըլլայ վարդապետ , արդ-  
եօք հայէրը սխալե...

— Ծօ՛ անոնք ոչ հայեվար եւ ոչ ֆռռան-  
սեվար գիտեն , կարդալ գրել չ'եէէէ՛ն  
սովբիր , չ'եէէէ՛ն գիտեր , ճանրմ ասոնք  
ինչու՞ Փարիզ եկեր են , տեղէրնին չ'են  
կրնար նստիլ. մերոնք կինէ շէնք շնորհք

բան մը կը սովորին կ'երթան, զիս ալ կը պատուեն, ապրի՛ն - իսկ ան մէկալնէրը շուն ու կատու՝ իրարու միտ ուտելէն ուրիշ ատեն չ'ունին որ բան սովորին, կ'ելնեն մուկի պէս ամէն պտուկի մէջ կ'ըյնան, ամէն բան կը պղծեն, շան պէս ասոր անոր ոտքը կը խածնեն, իշտէ ան Կոկոզնէրուն համար ելայ հիմա հայեւար աշխարհարատ թարգմանեցի որ օր որ, երթան կռնակնէրնուն ճաթին պատուին եւ ան տղէտ վարդապետնէրն ալ կարդան ու մերոնց դէմ չը տըռտըռան :

— Մերոնք ըսածնիդ ո՞վ է վարդապետ.

— Ճանըմ սա մերոնք, Էջմիածնականաց կողմը չ'է՛, Առաստուրչականաց կողմին համար կ'ըսեմ.

— Չ'եմ հասկնար վարդապետ .

— Երբոր օր որ Էջմիածնական կըսենք նէ տղաս, ան Բարկէնին՝ ան մըղըռախլը վարդապետնէրուն հետեւօղ ժողովրդոց համար կ'ըսենք. ասոնք ելեր՝ Առ.

սաւորչական ենք կ'ըսեն, պէ՛ տէ՛ յինտի՛,  
ձօ՛ Լուսաւորչական եղօղը Լուսաւորչայ  
ճամբան պիտի երթայ, էյ դուն անճամբէն  
ելար, ան Թէօսկօռօսնէրը, Տաթեւացի-  
նէրը տըմպ տէյի ընդունեցիր ու ծռեցար,  
չուվանը կըտրեցիր . կինէ ելեր տըռտըր  
տըռտըռ ես Լուսաւորչական եմ ես Լու-  
սա... մենք ենք Լուսաւորչականը, մե՛նք,

— Խօսքէրնիդ ընդմիջելուս ներեցէք,  
այդ բանէրը մենք չ'ենք դիտեր , արդօք  
Փարիզի հայերն աղղէն դատուեցան՞ .

— Փարիզի հայերուն խօսքը՞ կ'ըլլայ,  
անոնց ամէնքն անհաւատ, մինակ Քրիս-  
տոսի կը հաւատան անկէց ետեւ իրենց  
Վաթողիկոսին եւ Պատրիարքին ըսածնէ-  
րուն, հա՛ հա՛ ըսելով, անոր խօսք չը  
կայ՝... դլուխ կը ծռեն եւ անոնց հրամա-  
նէն դուրս չ'են ելներ . ոչ հաւատք ունին  
ոչ կրօնք, բան մըն է կ'երթայ . եկ ու  
տէս որ ըսես ալ նէ չ'են հասկընար կ'ել-  
նեն ծաղր կընեն :

— Հասցա ատ ըսած ժողովուրդդ ո՞ւր են որ՞ոնք են հայր վարդապետ .

— Հռոմէական կ'ըսենք՝ որ ուղափառ Առաստորչական ըսել է . եւ Էջմիածնական կ'ըսենք անոնց՝ որ հերետիկոս հերձուածող են , ինչպէս որ մէկ կողմին Հռոմէական կ'ըսենք այն պէս ալ մյուս կողմին Էջմիածնական ըսելու ենք . Առաստորչական ըլլալն ուստի՞ ասեր են .

— Ինծի շիօթ բան մը կ'երեւայ ըսածնիդ վարդապետ, եւ չ'եմ հասկընար թէ ի՞նչ ըսել կուզէք .

— Ըսել կ'ուզեմ որ կաթողիկ ըսուածնէրը (որ աս անունը տալով միւսնէրուն ալ կաթողիկոսական անունը պիտի տանք) Առաստորչական են .

— Պարձեալ չը հասկըցայ, որովհետեւ ես որ Էջմիածնական եմ եւ այսպէս ըլլալով Առաստորչական կարծեր էի ինքզինքս մինչեւ հիմայ, ձեր ըսածն ինծի նոր բան մը կերեւայ եւ խելքս չը հաս-

նիր. իմ գիտցածս այն էր մինչեւ հիմայ  
որ այս բառէրը մի եւ նոյն նշանակու  
թիւնն ունին :

— Նայէ՛ որ ըսեմ որդիս, աստուածա-  
բանութիւն չ'ես գիտեր եւ անոր համար  
է որ օր որ դժուարաւ կը հասկընաս .  
ամէն բան իրեն հակառակն ունի, հիմա  
կաթողիկին դիմացը դիր՛ կաթողիկոսը,  
Հոռմի դիմացն ալ էջմիածինը, նայէ՛,  
երկուքն ալ իրարու.....

— Պապին դիմացը զո՞վ դնեմ .

— Կաթողիկոսն ըսի եա՛ .

— Զ'է, պապի խօսք չ'ըրինք .

— Ի՞նչ պէս չ'ըրինք,

— Գիցուք թէ ըրած ըլլանք, բայց այդ  
երկու հոգին մէկուն դիմացն անցընելը  
վատութիւն չ'է՞ մի .

— Գուն իմ գրածնէրս կարդացեր՞ ես .

— Զ'է, բայց անցեալ տարի Փարիզէն  
գրեր էին հայէրն որ այսպիսի խնդիրնէ-  
րու վրայ շատ կը խօսիք եղեր, եւ

— Իրաւ է որդիս, շա՛տ ապրին, Փարիզի հայէրը ու շխմ տղաք են եւ ամէն բան մէկ անգամ լսելով կը հասկնան ու մաքէրնին կը սրահեն, նայէ՛ ապրին, խելացի եւ ամէն բան սրամտութեամբ խմացող տղաք են, ամէն բան ալ կը կարդան եւ աղեկ մը կը դատեն մանաւանդ իմ իղեանէրս • այնպէս պէտք է ըլլալ, անո՛նք են աղ-գին յոյսէրը, նայէ՛ ի՞նչպէս ըսածս հասկըցէր ու գրեր են, ապրի՛ն, ամէն օր կը դան ինծի բարի բարի լուրեր կը տան եւ զիս հօր պէս կը պատուեն :

— Հրամանքիդ հետ կը վիճեն եւ . . .

— Ես կ'ուզեմ այնպիսի բաներու վը-րայ վիճելնին, իմ իղեանէրս միտք բա-նալու բանէր են :

— Ամէնեւին դէմ են եղեր՝ առ . . .

— Գէէ՛մ, մօօ՛ն աիօ՛ դէմ, ան քանիմը Կոկողնէրուն ալ դէմ են, որ Փարիզի մէջ պակաս չ'են .

Չ'է, հայր վարդապետ, ըսել կուզեմ որ

այս գրածնէրուդ ամէնեւին դէմ են եղեր,  
եւ գրեր են որ, բաղնիք կ'երթաք քօւռ-  
նային՝ հարանիք կ'երթանք զօւռնային .  
կը տաք եղեր ինքզինքնիդ, եւ ատանկ ալ  
ըսեր են :

— Ըսեր են՝ . . .

— Երեսնէրնուդ ի վեր հազար անգամ .

— Ծօ՛ ատոնք ի՞նչպէս խա տեսեր են ,  
եւ ո՞ւր . ի՞նչ հատք ունին ատանկ բան  
առջեւ ըսելու , տունս դան նէ կը վը-  
ռընտեմ երեսնին տեսնել չ'եմ ուզեր .  
անզգամութիւն չը մընաց ըրին ու հիմա  
ելեր ինծի համար ալ ատանկ բանէ՞ր կը  
գրեն . հազար անգամ ըսած եմ որ սրբուին ,  
կ'ելնեն չամուռտ ոտքով տունս տեղս  
կ'աղտոտեն , քանի՞ քանի անգամ վըռ-  
ընտեր եմ , բայց կաշի սօւռաթ , կ'ելնեն  
կ'ելնեն կը դան , խօրսամ տունս ճակատ-  
նին է գրուած , պէ՛ տէ՛յինտի՛ . . .

— Խնդիրն ատոր վրայ չ'է հայր վար . . .

— Ծօ՛ սա կը դան քօւռ շիներս ալ կը

Տըթքին ու կ'երթան ետեւէս ալ այդ պիտի վայնասուն կոկողարանու.....

— Հիմա Փարիզի հայերը մէկ դի ձգենք, սա պատին դիմացինը ո՞վ պիտի ըլլայ զայն կ'ուզեմ հասկնալ :

— Անիկա մի' հարցնէր, ասոր պատասխանը ես անգամ մը խոստացեր եմ բայց ամէն բան ժամանակ ունի :

— Նայեցէք հայր վարդապետ, ըսածնէրնուդ տակէն բաղմաթիւ եւ ծիծաղելի հակասութիւններ հանօղ մարդոցմէ շատ բանէր լսեցի դանի մ'օր առաջ, բայց անոնց (իրբեւ ապացոյց) բերած պատկառելի անունները հիմա բերանս առնել չը վայլեր, նայեցէք որ այսպիսի խնդիրներու մէջ անդգուշութեամբ չը մըտնաք ու գայթակղութեան պատճառ չ'ըլլաք :

— Ասոնք ան փռօղէսդանդներուն չարութիւններն են.

— Չ'է, բուն հայերու բերնէն լսածնէրս ասոնք եւ ասոր նման բանէր են.



— Հայէրն ալ անոնցմէն ի՞նչ տարբերութիւն ունին, անոր խօսք չը կայ՝... պապին խօսքն ըրածիդ պէս լեզվինին կը փրթի, փորէրնուն ցաւն ալ կը բռնէ .

— Սա վերջին ըսածնիդ իրաւամբ է՝ բայց խնդիրէն չը հեռանալու համար, սա չուվանի մը խօսք ըրիք նէ ի՞նչ էր. կրնա՞նք այն չուվանին ինչ ըլլալն իմանալ .

— Ես ատոնց վրայ երկայն բարակ խօսեր եմ. դուն իմ գրածնէրա չ'ես մի՞ կարդացէր .

— Ի՞նչ բան .

— Ճանըմ սա գրածնէրա քեզի չը տուին՞ .

— Չ'է, եւ ոչ գիտեմ ինչ ըլլալնին .

— Անանկ է նէ ընծաս ալ չ'առիր .

— Աման Վերասպատուելի հայր ոտքիդ եւ անոր շունքին առջեւիկը մեռնիմ սա ընծայէն ինձի հատիկ մը ...

— Ապրիս՝ տղաս ապրիս՝, ես դքեզ կը

սիրեմ, անհո՛ղ եղիր բայց հիմա քույս  
չ'ունիմ, ժամանակ մը դիր ու ինձի գրէ՛  
ի Փարիզ որ միտքս մընայ. կը գրկեմ արդ.  
— Օրհեալ է Աստուած ....

Ժամակոչին ձայնէն երեւալն, ական-  
ջըս թող տալը, կըզկըտիլն ու անբան  
պատկերի դառնալը մէկ եղաւ մեր հեղի-  
նակին. եւ ինչպէս որ նա իր առջի վի-  
ճակը՝ նոյնպէս եւ ես ինքզինքս առջի  
տեղը դասայ ու ատն վազեցի որ սա նա-  
մակս սուրհանդակին հասցնեմ :

« Պերիմաստ, օրենսդիր, դեկավար տա-  
« պանին Հայոց մեծաց, կարգեալ  
« ի վերստէն, ոտք եւ գլուխ, թիւ եւ  
« դիկունք տանն Թորգոմայ Տեառնդ  
« կամ լաւ եւս է Հօրդ մատենարանի.  
« Խնդալ.

« Ըստ անփոփոխ եւ անայլ-  
« այլէլի խոստաման Պերաբարձ-

« րուծեանդ պատկերի, պատիւ  
« անձինս համարիմ ու զղել զդուզ-  
« նաքեայ թուզթս զայս վասն յիշե-  
« ցուցանելոյ զշնորհն զոր խոս-  
« տացեալ էիք նորին պատկերի  
« հրաշագարդ միջնորդութեամբն :

« Հնապա հաճեսջիք յանձնել զմի  
« յօրինուկաց Ընծայի առ Մտերիմ  
« բարեկամն մեր Բառնակ Թոռ-  
« քըռակեան, յորմէ ակն ունիմք  
« անդանդազ ընդունել ընդ նմին  
« եւ զայլ եւ այլ գրեան :

« Յայտ առնեմք եւ զայս ձե-  
« րումդ տէրութեան զի անչափ է  
« սէրն ազգիս Հայոց եւ անպատ-  
« մելի ուրախութիւն նորայազագս  
« հայրաշնորհ Ընծայիդ :

« Շատ համարեցի առաջի գե-  
« րիմաստուծեան Ձերոյ համառո-  
« տագիծ կրճատուծիւն նամա-  
« կիս :

« Ձերումդ միայն իմաստու-  
քեան, յաւիտեանս յաւիտե-  
նից կոյր, խոյլ, տգետ եւ խո-  
նարհ ծառայիս .

Թ. ԿԸԿՌԻԿԵԱՆ .

Ուրբաթ, Կ. Պօլիս, 1856 : »

« Առ. Բառնակ Թոռքոական ի Փարիզ .  
Կ. Պօլիս, հոկտ. 1856 :

Մտերիմ բարեկամ

« Ապրսպրած զրքերուս վրայ  
հատ մըն ալ կ'աւելցնեմ որուն

անունն է ընծայ. այս գրքին հա-  
մար աւելի ստակ զրկել հարկ չ'է  
ինչպէս որ անունն ալ կը վկայէ  
մանաւանդ որ մեծիմաստ Հեղի-  
նակն ալ խոստացած է շնորհել  
ինձ զայն: Ներփակեալ նամակս  
շիտակ իրեն պիտի զրկէի բայց  
իր տանը կ'ընէ որ զտեսին անունը  
պէտք էր առաջուց իմանալ, թո՛ղ  
որ իր դռանն աշխարհքիս որ կողմը  
բացուիլն ալ չ'էի գիտեր, ասոնց  
ամէնը պատճառ եղան կէս ճամ-  
բէն տունս դառնալու, մինչեւ որ  
հասայ շողենուր ճարդանելին մօ-  
տեցած էր, կրնաս երեւակայել  
որ ետեւէն հասնելու հնարը չը  
կար, ուստի ձգեցի որ երթայ:

« Հետընթացին հասցնելու մի-

չոց եւ բաւական ժամանակ ունիմ.  
օրոշեցի որ Հեղինակին գրած  
նամակիս հետ Ընծայի նիւթին  
վերաբերեալ կապոցիս նամակ-  
նէրէն մաս մըն ալ օրինակեմ ու  
քեզի զրկեմ որ եղելուծեանց աղեկ  
մը տեղեկանաս : Եւ որովհետեւ  
այս օրէրս զանազան խնդիրք  
երեւան ելան Ընծայի հեղինակին  
դէմ՝ քեզի չը վայլեր անտարբեր  
կենալ այս բանին վրայ, արժան է  
որ Յերիմաստ հեղինակին վրայով  
եղած բամբասանքը քու կողմանէդ  
արգիլես անաշտուծեամբ. Փա-  
րիզէն եկողնէրուն ամէնքն ալ  
տեսածնին եւ լսածնին կրնան  
մոռնալ եւ առանց չար մտածման  
եւ ատելութեան շատ բանէր կըր-

նան խօսիլ անոր վրայ, ինչպէս  
որ ակնջուլս ալ լսեցի, Թէ տա-  
րիքը սղալ նշանակուելուն, Թէ  
պատկերին աննմանութեանը, Թէ  
իր կրօնքը սրտին հետ բամպակ  
մանածով միայն կտպուած ըլլա-  
լուն եւ Թէ փոփոխական բնաւո-  
րութեանը վրայ եւ այլն, եւ այլն:

« Ասոնց բոլորը Փարիզէն եկող  
հայերէն ելաւ, իսկ դուն անձամբ  
չը պիտի գաս՝ այլ հոտ եղածը եւ  
քու զիտցածդ ինչպէս են՝ այնպէս  
պիտի գրես, ատոր համար վախ  
մը չ'ունիմ եւ հաստատ զիտեմ որ  
զրուածիւնը մարդու պէս չ'է եւ  
լաթի պէս ամէն շափեթու չը փո-  
խուիր: Ուերեմն արդար եզիր եւ  
ինծի ճշմարիտ տեղեկութիւն մը

տուր հեղինակին վրայով որ ես  
ալ ըստ այնմ վարուիմ իր թշնամ-  
եացը հետ :

« Գուցէ քիզի չափազանց երե-  
ւան ըսածնէրս՝ սակայն այս նիւ-  
թին վրայով ընդունած անհամար  
նամակներու քանի մը հատին  
օրինակները մէյմէկ սպացոյց են  
Թէ Հայաստանի դաւառնէրուն  
մէջ ինչ շարժումնք եւ ինչ յեղա-  
փոխութիւնք եղած են :

« Նախ եւ առաջ զիս ամօզ բա-  
րեկամինը կ'օրինակեմ, միւսներն  
ալ ըստ կարգի :

« Վարդան ուրեմն այս նամակ-  
ները որ ետքի ըսելիքս ազեկ  
մը հասկընաս :



Առ Թոռնակ Կրկօրիկեան ի Կ. Պօլիս :

« Ես ստորագրեալս ծառայ ծառայից  
« հող եւ մոխիր, տան տնուոր 64 տա-  
« րեց, երկրեք զաւկի եւ ջորս - հինգ  
« արջառի տեր, գերեզմանիս քարը  
« պատրաստ' մեռնելու օրս ալ վրան  
« գրուած. պատիս ետեւը կոկոզիկ ըրեր  
« աշխարհքին առջեւը կը խոստովանիմ  
« որ Պօլիսէն 32 սնտուկի ջափ գիրք էին  
« առաքեր, չ'եմ գիտեր որի կողմանէ,  
« այս օրինակ նամակաւ .

### Սիրելի Մանտալեան

Չեմ գիտեր ուստի՞ եկան այս սնտուկ-  
ները բայց քեզի կը զրկեմ. գիտնա՛ս որ  
ամէն մէկուն մէջ 1856ական օրինակկայ-  
բայց ամէնէն հարկաւոր խրատները հոս  
նշանակեմ որ զգուշանաս : Մնտուկներուն  
մջէն խառնակոչում ձայն մը լսածիդ պէս  
չ'ըլլայ որ քիթդ խնջես . իմացայ որ

ատոնց մէջ արական իդական բանէր , ներգործական կրաւորական տառէր եւ գոյական ածական գրէր շատ ըլլալուն՝ անդադար մէկզմէկու գլուխ կը պատուեն՝ երբեմն ալ իրարու աչք հանել կ'ուզեն եղեր . մի՛ վախնար, սնտուկնէրուն երեւալը կռահածիդ պէս իշուն ականջը ամուր մը խած, մինչեւ որ սկսի զըռալ . մընացածը քու ազգասիրութեանդ կը ճըղեմ, նայէ՛ որ Հայաստանի ամէն գաւառներուն բաժնէս ասոնք, եւ ըսէս անոնց որ այս գործոյն վրայով եղածն ու չ'եղածը քեզի գրեն, եթէ կրնաս՝ ընդունած պատասխաններդ ալ ինծի գրկէ՛ .

Ողջ լեր .

Անուն չ'ունիմ :

- « Այս սնտուկներն անձանօք բարեկա-  
« միս հրամանին համեմատ Հայաստա-  
« նի բոլոր գաւառներուն բաժնած էի :  
« Երկու շաբաթէն ետեւ Ծուռքերնէնց

« Արուքն եղովիայէն յՍամասիայ եկաւ :  
« ու դունես ներս մտաւ : բարեւեան առաջ  
« գլխուս մէջ մ'իջեցնելէն ետեւ' սար-  
« սափելի երդում ալ առաւ բերնես որ  
« իրեն ամեն ըսածը կատարեմ . երդմա  
« նըս տակն ստորագրութիւնս դնել տա .  
« լին յետոյ , սանկ ըսաւ .

« Սա կապոցին մեջ դրկած սնտուկնե-  
« րուդ պատասխանքն ու անոնց հաշիւ-  
« ները կան որ ուզեր էիր իմանալ , առ ու  
« բեմն կարդա՛ եւ դրկէ ի Պօլիս որ շու  
« տով տպուին եւ աշխարհք իմանայ .  
« իսկ եթէ իմ մասնաւոր միտքս ալ իմա-  
« նայու կը փափաքիս , Ա՛ն քեզ իշխա-  
« նութիւն եւ զօրութիւն իմանալոյ..... »  
« ըսելով երեսիս ի վեր շոռոսնք , ապ-  
« տակ մըն ալ իջեցընելն ու հայածիլը  
« մէկ եղաւ : Երկու ձեռքս երեսիս  
« վրայ քանի մը վայրկեան կենալես եւ  
« աջացս արտասուքը գոտիիս ծայրովը  
« սրբելես յետոյ ' աջքս բացի եւ զար-

« մանքով տեսի որ մինակ եմ . արտոր-  
« նօք ելայ ու երդմանս նիւթի կապոցն  
« առնելու գացի , որ ընդունած իշխա-  
« նութեանս ձայնէն երկրեք փարսախ  
« անդին եր ցաքքած : Այս կապոցը  
« բանալես ու ամէն մէկ նամակը գատ  
« գատ նայելես յետոյ միտքս ընկաւ որ  
« ձեռագիր կարդալ չ'եմ գիտեր , զի  
« գրոցաշակերտութեան երբալուստա-  
« ջին պայմանն այն եր որ գրելը միայն  
« սովըիմ ու կարդալն ալ մեռնելես  
« առաջ պիտի սովրէի . բայց ասունց  
« վրայ խօսիլ ինչ հարկ . նամակները  
« քեզի պիտի դրկեմ որ դուն ինքդ կար-  
« դաս ու տպել տաս , երդումս տեղը  
« տանելու համար . ընդունած իշխա-  
« նութիւնս ինչ ճամբով որ ըլլայ քեզի  
« հասցնելն իմ պարտքս է , անոր վրայ  
« անհոգ եղիր :

« Ժամանակ չը կորուսնեմ սիրելի  
« Թոռնակ Արկոիկեան դրացնաւորդիս ,

« Երթամ ու տանիսիս վրայ կենամ .  
« տար երկինք որ ճամբորդ մ'անցներ  
« դէպ ի Պօլիս երկընցօղ, եթէ այնպէս  
« ըլլայ Արուքէն ընդունա՞ծս ամենայն  
« հաւատարմութեամբ մանաւանդ նոյն  
« իսկ արագութեամբ եւ միջոցաւ՝ ճամ-  
« բորդին կը հատուցանեմ . իսկ եթէ ոչ՝  
« ալ այն ատեն ես անձամբ կը պար-  
« տաւորիմ բերել այս զրած նամակս  
« եւ հատուցանել քեզ ամենայն ինչ  
« հանդերձ իշխանութեամբ եւ զօրու-  
« թեամբ զորս ընկալեալ եմ ի Ծուռքե-  
« րանենց Արուք աղպրէն :

Գրեցաւ ի 12 Աւելեաց, յԱմասիայ,  
ի ներքնակողմն պարսպի որ ի տան հօր իմոյ :

Մնամ ոտիցդ հողաբափ եւ տանդ  
աղբը թափօղ

Զա. Կեն. Վո. Տո. ՄԱՆՏԱԼԵԱՆ . »

« Բարեկամսիս Թղթակից չը գա-  
նելով՝ զրած նամակն անձամբ բե-

րած ու պարտքն ալ կատարած է :

« Ահառասիկ միւս նամակաց  
օրինակներն ալ որ Հայաստանու  
ամէն կողմէն գրուած էին առ Պ.  
Զա. Կեն. Վո. Յո. Մանտայեան  
գործակալին Ամասիոյ :

ՆԱՄԱԿ Ա.

Խամ 179 ի Սերաստիա :

« Զա. Կեն. Վո. Յո. Մանտայեան պատանի  
բարեկամիս 64 տարեց խնդալ :

« Իրիկուրնէ ի վեր հիւանդ էի քու  
« ըրած անխոհեմութեանդ պատճառաւ .  
« Թաքարին Պօլիս երթալն իմացնօղ  
« մունետիկին ձայնէն հոգիս վրաս եկաւ .  
« արքնցուց . քեզի այս նամակս գրելէս  
« յետոյ նորէն պիտի պառկիմ ու հի-  
« ւընդնամ . ըրածիդ համար իրիկուրնէ  
« ի վեր աչքս մրափ մը չէ տեսած . մտքէ

« անցնելու, բան էր եղբայր որ ես այս  
« Քաղքին Քեօսէլէճին ըլլամ ու բոլորին  
« ունեցած բանն իմ քովս չը գտնուի,  
« բո՞ղ արանց ես կանանց մանաւանդ  
« օտարականաց առջեւ ծաղր ու ծանակ  
« ես խայտառակ ըլլալս : Քաղքիս  
« դռներուն սեմոցը բռնե մինչ ի տա-  
« նիսները՝ խալկիներուն տակերն ան-  
« գամ լուսերով զարդարուած, ամեն  
« մարդ ուրախ այր ես կին պատուհան-  
« ներէն վար կախուած իրարու գիրք մը  
« կը ցուցընեն ես անդադար *Ընծայ*,  
« *Ընծայի*, *Ընծայէ*, *Ընծայով*, *զԸնծայ*,  
« ո՞վ *Ընծայ*, *Ընծան* սանկ ըսաւ, *Ըն-*  
« *ծային* մեջ սա կայ, *Ընծային* մեջ նա  
« կա ըսելով՝ ձայն մըն է կ'երթայ .  
« ոմանք ալ իրենց տնէն դիտակով դի-  
« մացի տանը կը նային, մարդ ալ կայ  
« որ գլխու մազերն երկու ձեռքին մեջ  
« առած դռանը լուսաւորեալ սեմոց  
« առջեւը փորին վրայ պատկած ու

« գետինը գիրք մը փռած անոր վրայ  
« կը նայի . ո՞ր մեկն ըսեմ :

« Յայտնի բան ե որ ես ալ՝ իբրեւ քաղ-  
« քրցի մանրդ՝ ելայ լուսերուն առջեւը  
« կարդացող անձանց հարցուցի թե ինչ  
« կայ . խօսքը բերանս բողոցին , տես-  
« նելու եր թե ինչ բաներ չ'ըրին ինչէր  
« չ'ըսին . քանի հարցուցի , հա՛ վայ ,  
« ծօ՛ նայէ չը գիտեր , *յիօհաներ չիւշեր*  
« ամեն գլխէ մեյմեկ ձայն... Ճարս հա-  
« տաւ գացի պառաւ կնկան մը հար-  
« ցուցի որ բարութիւնն երեսէն գրե թե  
« կը վազեր .

« — Մարիկա ինչ կայ , այս լուսաւո-  
« րութեան պատճառն ինչ է .

« — *Ընծային* համար է , մըրս ի վրադ  
« չ'ես գիտեր որ .

« — Չ'է մարիկա , *Ընծան* ինչ է .

« — Քն՛ վայ խելքիդ մտ ալ չ'ես գի-  
« տեր , այս գրքին անունն է , քն՛ աշ-  
« խարհք արարած ուրախութիւն կ'ընեն



« ասոր համար՝ ու եկեր ինձի կը հար-  
« ցընէ... զիս ծաղր ընելու համար է չ'է  
« նէ գիրքս յափշակելու մտօք եկեր ես.

« — Չ'է մարիկս չ'է, այդ գրքին մեջ  
« ինչ կայ որ այս չափ կ'ուրախանան  
« քաղքցիք, ան կ'ուզեմ իմանալ .

« — Անանկ է նէ քիչ մը հեռի կայնէ  
« ինչո՞ւ եկեր գիրքս մտեր ես .

« — Մի վախնար մարիկ, ես բան մը  
« ընելու միտք չ'ունիմ .

« — Քիչ մը բացուէ որ ըսեմ, վասն  
« զի չորս ժամ ոտքի վրայ կենալէս ու  
« խավասներէն քանի՜ մը կոփ ուտելէս  
« ետեւ *Եախըլիս* լաթն ալ կորուսի որ  
« զեւ մաքուր երկու ամսուան լուաց-  
« ւած էր .

« — Շատ աղեկ, անն հեռին քաշուե-  
« ցայ . Էյ, ինչ է .

« — Այս գրքին մեջ ամեն բան կայ .

« — Ի՞նչ .

« — Ես ինչ գիտեամ, շատ, ամեն բան .

« — Այդ շատերուն մեկը ո՞րն է .

« — Զրկիրս ըսաւ. թէ աշխրքիս մեջ  
« ասանկ բան տեսնուած չ'եր .

« — Զրկիրին ըսածը չ'եմ հարցներ  
« մարիկս, գրքին մեջն եղածներուն մեկ  
« երկուքն ըսէ, հոգիս մի հաներ, չ'է նէ  
« գիրքդ ասդին անցուր որ անգամ մը  
« նայիմ ու քեզի դառննեմ .

« — Մոխիրս անքդ. պանիրիս տիկն  
« աւելի շան կը հաւտամ քան թէ քեզի  
« գիրքս. ես այ չ'եմ երթար աքաղաղիս  
« քանի մը հագար հաւկիթ ածել տար ու  
« կեցեր ժամանակս աս տըլլային հետ  
« կը կորուսնեմ .

« — Կեցիր մարիկս... ատկեց ուրիշ  
« ինչ կայ .

« — Ամեն բան . — ըսաւ ու գնաց :

« Ես այս լրիսկած պատուոյն ըսածին  
« չ'եի հաւատար, բայց ըսելն ու հալա-  
« ծիլը մեկ եղաւ. եշ չ'եմ ան, հասկըցայ  
« որ գրքին գորութեամբն էր. հիմա սա

« նանակս Թաքարին տուածիս պէս ե-  
« րեսներս պիտի պահեմ քաղքցոցմէն ու-  
« երթամ պառկիմ , մինչեւ որ հատ մը  
« չը դրկես ելնելիք ջոնիմ : Կ'աղաչեմ  
« բարեկամ, իրաւամբ ալ կը պահանջեմ,  
« քանզի կ'երեւակայեմ որ աքաղաղը  
« հաւկիթ ածելէն ետեւ ի՞նչ իրաւամբ  
« քեօսէլէ չը պիտի ածէ :

Ո ոջ լիք մինչեւ որ ընծան ճամբու դնես .

ՔԵԼԷՇԻՍ ՊՈՐՏԸՄԵԾԵԱՆՆ՝

ՆԱՄԱԿ Բ .

Երզնկա , 8. ժամ առաւօտ , 1856 .

Տանտնուորից Զա. Կեն. Վո. Տո. Մանտալեանիս  
բարիլուսէր

« Զորս օր է քթերնիս պատուհանէն  
« դուրս ելած ու պատառ մը հով ծրծած  
« ջ'ունեին , որոտում որոտման' կայծակ  
« կայծակի' ետեւէն ալ կարկուտ կար-

« կտներու վրայ տեղացին . Քաղքնուս  
« գլուխն ու երեսը Խըմպըլ Թորոս բաղե-  
« րային կգակը դառձաւ . վրան , տակը  
« եւ մեջը բան մը չը մնաց . տներնիս'  
« ճանճ . մախսէններնիս' մոռկ . գլուխ-  
« ներնիս' ոջիլ , պառաւաններուն վարտկո-  
« ցը մեջ' լու եւ այլն եւ այլն , ասոնց  
« ամենն ալ հատան . ելան շներն ու  
« կատուներն ալ պատրաստութեան զար-  
« կին ինքզինքնին , մեզի ալ մագ մնաց  
« անոնց ետեւէն ձգել երթալ ու Քաղաք-  
« նիս Պոռոռնսուզ Աշըխին կտակ ընել :  
« Ընծային շնորհաւոր լուրը քենե առ-  
« նելիս երկու ժամ ետեւ' սա նամակս  
« սկսած ու գրիչս փոթորիկին նուիրած  
« էի , մինչեւ հիմա ավելին կոթովը կրցի  
« գրել , բայց ան ալ ձեռքես առին ու  
« դրացի Տավիջօնին տանը նեցուկ ըրին  
« որ քիչ մը շտկուեցաւ եւ հոգի առաւ .  
« այն ժամանակէն ի վեր ինքզինքս հացի  
« տաշտին մեջը նետած անոր ակիշովն

« ալ թի վարելով ջրհեղեղէն բոլորովին  
« ազատելէս ետեւ նոյն ակիշը գրիչի  
« տեղ գործածելով մինչեւ այս տողերս  
« հասայ :

« Եւ ահա այս յուսահատ ատենս եր  
« որ *Ընծան* Քաղքիս դռնէն ներս մտաւ  
« ու ակնթարթի մեջ հրաշքը ցըցուց .  
« այս տողերս դեռ տաշտիս մեջը նըս-  
« տած կը գրեմ , որ Քաղքիս բարձր եւ  
« աւերակ աշտարակին ծայրը գնաց կե-  
« ցաւ . վար իջնալու ժամանակ ջ'ունիմ,  
« հեռիկն կը տեսնեմ որ հրեից Ռաբբին  
« մորուքն ածիլած *պինիշը թէրս* հագած  
« *Ըծային* առջեւ երեսն ի վար կը պառկի  
« կ'ելնէ , Քաղաքապետն ալ վարտիկը  
« կապելու վրայ է եւ դիմաւորելու կը  
« պատրաստուի . ժամանակը կարճըցաւ  
« նամակս շարունակելու չը բաւեր :

« *Ընծան* Քաղքիս հրապարակին մեջ  
« մտաւ . սեւազգեստ մարդիկ սեւ դի-  
« մակներով անոր բոլորտիքը կը շըրջին ,

« դիմակնին վար առին . մութը կոխեց  
« անջ'եմ կրնար շարունակել . Ողջ լիք :  
Մնացածը միւս նամակաւս կ'իմացնեմ .

Մկրտչիս Կրտսերոյ

ԹԱՅՎԱՐՏԻԿԵԱՆ .

Ծնեալ ի Հոռոփ խաթունե Կապուտակն » :

ՆԱՄԱԿ Գ.

« Ակն սեպտեմբեր 1856 :

« Նախ' շենք - շնորհք բարեւ մը Մանտալեանիս  
բազում գանգատանօք ,

« Քաղաքս հասած օրես ինը ժամ  
« ետքը դռանս առջեւը հազար հոգի  
« կեցեր ու կ'սպասէին խոստացած  
« Ընծաներուս . պատուհանես կը տես-  
« նէի որ ամենքը ծիծաղէրես դեպ ի վեր  
« կը նայէին իրենց երախտագիտութիւնն  
« ու շնորհակալութիւնը մատուցանելու  
« համար . այնպիսի երջանիկ օր մը  
« չ'եմ յիշեր երբեք որ կենացս մեջ ու-  
« նեցած ըլլամ . տուողին սիրտը հազար

« անգամ աւելի կը գգայ եղեր այն ու-  
« ըախութիւնը քան թէ ընդունողին ,  
« երկութիւն ալ փորձը անձամբ ընելուս  
« համար ե որ ըսածս պնդելու իրաւունք  
« ունենալ կ'ուզեմ . վասն զի շատ ան-  
« գամ Տիրօջամէ ընծայ ընդունած' ու  
« այս չափ ուրախութիւն գգացած չ'էի .  
« հիմա միտքս կը գայ որ Տերօջս երե-  
« սին վրայ անոյշ ժպիտ մը կը նշմա-  
« ըուէր ընծայած ատենը , այն ժամա-  
« նակն' որ խելքս միտքս միայն ընծային  
« վրայ' ժպիտի պատճառն անգամ իմա-  
« նայու չ'էի մտածեր . բայց այս ինչ  
« երջանկութիւն եւ ինչ ուրախութիւն  
« կը գգայ եղեր մարդս' աղքատին  
« կամ իր ազգին եւ կամ ո՛ր եւ իցէ մար-  
« դու ընծայ կամ նուէր մ'ըրած ատենը :  
« Այս երջանկութեամբ գգածեալ աչքս  
« երկինքն ի վեր մինչդեռ բերանս բաց'  
« յանկարծ մեկն եկաւ մաքսատնէն  
« Ընծայի հասնիլն իմացնելու . ես որ

« սպասող բազմութենէն աւելի ուրա-  
« խութիւն կը գգայի՝ նետեցի ծրար մը  
« ոսկի Մկրտիչ ախպօր որ իսկոյն եր-  
« քայ ուզածնին վճարե՛ք եւ սնտուկը  
« ջը բացուած առնէ բերե :

« Կես գիշերէն երկու ժամ առաջ  
« սնտուկը դռնէն ներս մտաւ, ժողո-  
« վրդեան ուրախութիւնը պատմուելու  
« բան չէ ... Բացինք ... Վայ պապուդ  
« ոսկըրտութքը կուրուան շուն - շան  
« գառակ ...

« Ծօ Մանտայեան, այդ բրդականջ  
« Քաղքեղ անցած ժամանակս՝ յինէ  
« առաջ ճամբու դրած Ընծադ մն էր ...  
« Ծօ ինչքի կամ ո՞ր դռան մանտայն ես  
« դու՛ գայլի գառակ, այդ քու մանտայիդ  
« ո՞ր կողմէն դառցնեմ, ո՞ր դռնէրը ո՞ր  
« դժոխոց բերանները բանամ, գոցեմ,  
« կիսախուփ ընեմ ու դարձեալ սկսիմ  
« շան որդի. հազար այ պատկեր կայ  
« մեջն ըսածդ՝ այս Թուռշի սօւռաթլը



« պատկերին համար եր որ այդ *Ընծան*  
« քթիս բրդիցեր ծո՛ . քենե ո՞վ *Ընծայ*  
« ուզեց , ո՞վ ըսաւ որ իմ անուանս  
« սնտուկ դրկեմ , ա՛ն գանկդ կոռդ ջոր-  
« ջրրկի . աս ինչ ձիւն եր որ գլխուս  
« բերիր . *Ընծայի*դ մեջ բան չը կայ ծո՛ ,  
« կոընծած եւ խառխնգին երես պատ-  
« կերեն ուրիշ բան մը չը կայ . ճընճոց  
« լեզու մ'ալ ունի որ մարդ չը հասկը-  
« նար :

« Սպասող խեղճերեն աւելի բան  
« կորուսի . բրդոտ բերնիդ հաւտայով  
« ունեցած չ'ունեցած *Ընծայ*ներս ելայ  
« ճամբուս վրան ասոր անոր բաժնեյես  
« ետեւ ' մաքսին , ճամբուն , շուն - շըն  
« տրին ալ ( ուրախութենես ) ստակ  
« ստկի վրայ դրի եւ վճարեցի : Ծո՛ , աս  
« 1812են մնացած հին , լիկած , ցնքած ,  
« խեղրած , բորոտ , քոսոտ , որդնո-  
« տած , պոչով , կօտօշով , հաջող -  
« ոունացող , անճոռնի եւ այլանկար

« կենդանւոյն համար եր Ընծայ ըսածդ :  
« Գիտես ինչեր եղաւ , այդ Ընծային  
« պատճառաւ , Բաղաքնիս տակն ու  
« վրայ ' տղաքնիս լեղապատառ ' այր եւ  
« կին երերեալ տատանեալ եղան , բող  
« որ ընտանիքս ալ առանց Ընծայի  
« մնաց : Իրաւ է որ երեսիս չը տալով  
« ժողովուրդն ընդունած էր Ընծայներդ  
« ու տներնին մտած էին , բայց երեք  
« ժամեն ետեւ ամենը լեղապատառ  
« դողալով վրաս թափեցան , հրաման  
« ուզելու որ երթան այս Ընծայներն  
« եփրատայ ջրին տան . մս ըսելով  
« մեկ կողմեն ալ եղածները կը պատ-  
« մեին պոռայով , ոմանք կը հաստա-  
« տեին թէ Ընծային պատկերը տղայոց  
« երազն երթալով ուզեր է պոչերնին  
« կտրել , ոմանք ' հանուած ու մեջքն  
« ալ երկայն պոչ մը փաթթած տեսեր  
« են , ոմանք ' անմորուք վարդապետ  
« չ'ըլլար կը պոռան , երկ ըսածին պես

» Ե նե վեղարն ուր է կը կանչէ մեկը,  
« գաւազան ալ չ'ունի կ'ըսէ միւսը, օձի  
« պէս բան մըն էր կախուած ճտէն  
« կ'ըսէ մեկայը. վերջապէս զլուխս  
« դըղում դարձաւ, գացեք ուզածնիդ  
« ըրեք ըսի ներս քաշուեցայ: Մեկ ժա-  
« մէն ետեւ խառնագոջիւն ձայնով մը  
« անունս կանչեցին, վար վազեցի որ  
« ամենքը մեկ ձեռօք ջահերնին միւսով  
« ալ քթերնին բռնած թստեց, թստեց  
« կը պոռան, անոնց ըսելուն հար-  
« կաւորութիւն չը կար, արդէն մատ-  
« ներս քթիս վրայ էին. ձեր դունէն ներս  
« մտաւ, պոռաց մեկը. աս լսելուս չը  
« մնաց' Ընծային պատկերը դունես  
« դուրս ցարքեց ու կրծիկը դրաւ, երի-  
« տասարդաց մեկ քանին ալ ետեւէն,  
« վազն ի վազը հասան ու պոջին ծայ-  
« ըն բռնեցին, անոնք կը վազեն մենք  
« ալ ետեւնուն. քանի գնաց բազմու-  
« թիւնն աւելցաւ. պոջին վրայ փար-

« քրեօղ փաթթուողի՝ ոտքերնին սկսաւ  
« գետնէն կտրիլ, պոչը բռնօղները  
« վերջապէս պոչին բռնուեցան ու գա-  
« ցին, ճար չը կայ հասնելու. յոյսերնիս  
« քաղքին արեւմտեան կողմի դռանը  
« վրայ մնաց որ դեռ գոց էր. պատկերը  
« հոն ալ կանկ չ'առաւ, դռանը մեջ  
« տեղէն ծակուած փոքրիկ դուռը բաց  
« գտաւ եւ գլուխը ծակէն դուրս ու պոչը  
« ներս բապըլտրկած ժամանակը՝ մեր  
« տղաք ատեն ունեցան պոչարմատին  
« դանակ մ'իջեցնելու, պոչը ներս մնաց՝  
« պատկերն ալ վազելով դեպ ի յԱնկիւ-  
« րիայ գնաց :

« Արկած Ընծայեղ ահա այսպէս ազա-  
« տեցանք՝ բայց հոտը քթերնիս մնաց  
« մինչ ի ծագումն արեւու :

« Օխտը պորտոլ կը ծեփեմ մէյմ'ալ չ'ել-  
« նես նորէն Ընծայ դրկես : Մնամ .

Մարկոսի բող Մարկոսիս  
ԱՆՈՒՇԼԵԶԻԵԱՆ :

Ծնկալ ի 29 տրե, ի սենեկին վարիխաթու :

ՆԱՄԱԿ Դ.

Մուշ. Վերի դռանը քով, 1856

Նոր բարեկամ Արուք,

« Փարիզ տալուած *Ընծայ* անուն ղրր-  
« կած գրքեղ մեկ հատն իմ իրաւունքս  
« եր, բայց ցաւալի սրտիւ կ'իմացնեմ որ  
« այս օրուան օրը (նաւասարդի 9) մեկ ու  
« կես երես մնաց քովս, ո՞վ կը կարծեր որ  
« այս չափ մարդիկ գիւղերէն կը պար-  
« պուին ու Քաղաքս կը թափին պալեայ  
« մ' *Ընծայ* կը լափլիզեն ու վերջապէս կես  
« գիշերն երկուք անցած տանս դուռն  
« ափ կառնեն բթօք եւ զինուք: Ի՛նչ ամ-  
« բոխ ինչ բազմութիւն եւ ինչ ցաւալի  
« տեսարան, արք եւ կանայք իրարու վր-  
« ըայ մըջման պէս կը վխտան' ամեն գրչ-  
« խէն մէյմեկ ձայն' որը թեւս կը պոռայ,  
« որը գաւակս մեռցուցիք կըսէ, որն ալ  
« իշուն գլուխը ծոցեղ չը գողցնէս ըսե-  
« լով երկանը կամիթ մը կը տայ. ո՞ր մեկն  
« ըսեմ, այն միջոցին դռանս երկաթնէ

« րըն աղեկ մը ղնեյես ետեւ վեր ելայ որ  
« պատուհանս ալ գոցեմ, ինչ տեսնեմ  
« մեկէն ի մեկ մարդ մը պատուհանես  
« ներս նետուեցաւ, մեջքէն բան մը կա-  
« պած, նայեցայ որ վարէն քանի մը  
« փաթթոցներ ծար ծարի կապելով այս  
« մարդուն վրայ կծիկ մըն են շիներ ու  
« պատուհանես ներս նետեր են որ միւս-  
« ներս ալ՝ այն փաթթոցներուն պըլլըվե-  
« լով վեր ելնեն. բարերադղարար այս  
« մարդը խօսք հասկցօղ մըն էր, որուն  
« խոստացայ քովս եղածին ամենն ալ  
« իրեն տալ, այն պայմանաւ որ բազմու-  
« թիւնը վեր չը հանէ. տանս չորս ղին  
« լաւ մը բնտրուելէն ետեւ հասկցաւ որ  
« մեկ *Ընծայէն* եւելի ջունիմ. բազմու-  
« թեան հետ երկայն կռիւներ ընելէն  
« ետեւ հաւտացուց վերջապէս որ անկեց  
« ուրիշ չը կայ, եւ ամենուն հաւանու-  
« թեամբը քսանը վեց հոգիյին կես երես  
« բան նետելով մնացածն ինծի ձգեց,

« որուն երկայնութեան ու լայնութեան  
« չափը նշանակեցի վերը: Այս առջի  
« նամակս համառօտ կը գրեմ. դուն որ  
« այդ շնորհքն ըրիր ինձի պէս չը ճանչ-  
« ցած մարդո՞ղ այս չափ *Ընծայող* կելով՝  
« գիտէիր անշուշտ որ ինչ անիմանալի  
« հրաշքներով լի գիրք մըն է. ուրեմն  
« իրաւունք չ'է որ գիս այս վիճակին մեջ  
« թողունս երկայն ժամանակ, վասն զի  
« բոլոր գաւառացոց խօսք տուած եմ  
« իննսունը մէկ ու կես օր վեց վայր-  
« կեանէն. ամենուն ալ կեսկիսական  
« հատ տալու. ուրեմն բարեհաճեցէք այս  
« նամակս շուտ մը Փարիզ դրկել որ  
« Հեղինակն ալ՝ երէ չ'է իմ՝ գոնէ ժողո-  
« վրդեան վրայ գրայ եւ իսկոյն քանի մը  
« հարիւր հազար կեսկիսական օրինակ  
« դրկէ: Ողջ կեցի, Հեղինակին ալ առա-  
« ջուց գրէ որ նամակս քեզի եւ իրեն չը  
« հասած չ'ելնէ մեռնի, կ'ուզէնէ այնու-  
« հետեւ ալ թող ապրի մինչ ի Տօլմա

« փանայիրի եւ ջոօզներու ժամանակին :

Կաղ եւ Միականի ծառայիս

Ա. Խ. Ծ. ԽԼԱՆԿԱՃԵՆՑ

(Սեւ Մագերով).

« Յ. Գ. Վերի գրած հաշիւես մինչեւ  
« ցայս կեսը Քաղքիս մեջ երեք տղայ  
« ծներ են. մեկն այս օրուան, երկրորդն  
« արու, երրորդն ալ երկու տարու .  
« ասոնք ալ վերի գումարին վրայ դիր :  
« Իմ օրինակս չը մոռնաս : »

ՆԱՄԱԿ Ե.

Վան, Արեւու 6 եւ Լուսնի 14 :

« Տեսուց բարեկամի որդի բարեկամ Արուքի  
Ծուօքերանենց շատ ու շատ բարեւ ,

« Թուականես գանի մ'օր առաջ կես  
« գիշերը կես ժամ անցած մեր Քաղքի  
« ժամակոջին դուռը կը ջալվի .

« — Ո՞վ է այդ .

« — Ընծան .

« — Ընծան ո՞վ է .



- « — Ես եմ .
- « — Դու ո՞վ ես .
- « — Պապերուն դեսպանը .
- « — Ո՞ր Պապերուն ուղղակի դես-  
« պանն ես ,
- « — Անուննին չ'ես գիտեր .
- « — Անունը չը գիտցած մարդուս  
« դեսպանին չե' իրեն անգամ դուռ  
« չ'եմ բանար .
- « — Մեկինը կը ճանաչես օրինա՞ծ ,  
« բնց .
- « — Ատ ճանչա՞ծս քուկին հարազատ  
« Պապդ է չե նե բերնիդ եկածը դուրս  
« պիտի տաս .
- « — Զե գառնուկս , բուն իմինիս ես  
« ամենէն մեծին անունը պիտի տամ  
« որ շատ անգամ լսած ես , բնց .
- « — Անունդ ըսէ որ բանամ ըսինք  
« ես , ատ ինչ դըրում գլուխ մարդ ես  
« եղեր .
- « — Սեխբեստրոսին արո՞ւս...

« — Խոստովանիմ ես հաւատամ ...  
« Հրամէ՛ Տէր հրամէ՛. թողութիւն ըրէ՛ ,  
« մեղայ՛ զի այս չափ սպասել տուի  
« զքեզ . Տէրութիւնդ գիտե՛ որ գիշեր  
« ատեն ամենայն զգուշութիւն պետք է  
« մանաւանդ այս օրերս որ գողերը բո-  
« լորտիքնիս առած աչք բանայ չ'են  
« թողուր .

« — Վնաս չ'ունի տղաս ' կը ներեմ  
« բայց այն պայմանաւ որ դուն ալ իմ  
« խօսքիս մօտս ու ինձի հնազանդիս .

« — Ի՞նչ ըսել է, հրաման ըրէ Տէր իմ .

« — Շատ աղեկ , ապրի՛ գաւակս .  
« Եկեղեցւոյ բանալին քովդ է տղաս .

« — Հրամեր ես .

« — Լաւ , ապրի՛ որդիս . Հայաստա-  
« նեայց կնիքը ո՛ւր դրուած է գիտես .

« — Հրամեր ես Տէր իմ , Սրբատան  
« մեջ է .

« — Ո՛ղջ եղեր որդիս . անով այս

« թղթին վրայ մէյ մը կնքէ, միաս ընե-  
« լիքդ ալ ետեւէն կրսեմ .

« — Ատ ինչ թուղթ է .

« — Անցագիր ըսինք եւն , երկայն  
« ըրիր .

« — Ներէ ինձ Տեր իմ , Առաջնորդէն  
« հրաման ջ'ունիմ ջը գիտցած բանս  
« գմռելու .

« — Առաջնորդն ոմ է որ Լուսաւոր-  
« ջայ արգելք ըլլալ ուզէ .

« — Մեղայ Աստուծոյ ... ինչ ըսել  
« կ'ուզէ ...

« — Ըսել կ'ուզեմ որ ներսի սեղանին  
« վրայի Լուսաւորջայ եւ Տրդատայ  
« պատկերքը ճամբորդ են ' ես ալ (իբր  
« առաջնորդ) Եւրոպայ պիտի տանիմ  
« գանոնք եւ կ'ուզեմ որ անցագիրը  
« կանօնաւոր ըլլայ . գնա սա կնիքը  
« կոխէ որ լուսուն ջը մընամ Հայր  
« Քրաւինան ինձի կ'սպասէ .

« — Աս ինչ բաներ կրսե Տեր Աս-  
« տուած... ո՞ր պիտի երթան .

« — Երկայն ըրիր . Հոռոմ ըսինք եւ .

« — Ինչո՞ն . մեզ ասանկ երեսի վրայ  
« ձգել երբայու . ինչ կայ , մենք անոնց-  
« մեն ուրիշ ո՞վ ունինք , ո՞վ զմեզ պիտի  
« հոգայ , երկուքը մեկեն ինչ պէս  
« կրնան հեռանալ Տեր իմ , ուրիշ ճար  
« մը գտիր .

« — Ուրիշ ճար չը կայ , դաշանց  
« քուղքը պետք է անձամբ ստորագրեն  
« ու ետ դառնան .

« — Եւ չը դառնան նե .

« — Հայր Գրաւինա խոստացաւ ստո-  
« րագրութենէ վերջը գիրենք բող տալ .

« — Ատ հայր Գրաւինա ըսածդ ո՞վ է .

« — Զիս դրկողը .

« — Ներե Տեր , գքեզ դրկողն ո՞վ է .

« — Զիս դրկողն այն մարդն է որ' գնա  
« Հայաստանի կնիքով անցազիր մը վա-  
« ներացու' Լոսանյորջայ եւ Տրդատայ

« պատկերքն ալ գիշերօք ան. բեր ըսաւ .

« եթէ իմ անունս ալ կրկնելուս կը փա-

« փաքիս ընծայ ե... հասկըցա՞ր հիմա .

« — Բեզի կնիք չ'է՛ երեսիդ մուր չ'եմ

« կոխեր գո՞ղ առագակ . գնա՛ բանդ . ես

« ալ գքեզ մա՛րդ կարծեցի .

« — Խօսք տուած եմ, մինչեւ որ չը

« կնքես՝ սրկեց հունա չ'եմ երթար .

« — Գնա՛ բանդ ըսի . կոփը չը կերած

« երեսի ջրով ելի՛, կորսուե՛ սրկեց .

« — Զ'է նէ սա դաշանց թուղքը կնքե՛

« որ երթամ .

« — Այդպիսի օտար եւ ճանկալօզ

« գրեթուն տակը կնիք չ'եմ դներ, թո՞ղ

« որ Սրբատան բանալին ալ իմ քովս

« չ'է, եւ եղած չ'ունի .

« — Գնա՛ սա բանալին ան. բեր ըսի,

« չ'է նէ տունդ ու տեղդ հիմայ կը քա-

« կեմ ու գլխուդ կը փլցընեմ . գնա՛ .....

« — Կայնե՛ նայիմ . —

« Կ'ըսէ ժամակոջն ու կերթայ կոփը

« Կառնե կը գայ, Ընծան կոփին շուքը  
« տեսածին պէս դռնէն դուրս կը ծիկը  
« կը դնէ ու կը հայածի :

« Այգոց ' ամեն մարդ եկեղեցւոյ  
« հրապարակը հարուած այս անցից  
« վրայ խօսած ատենին ' Այվագենց  
« Ակորն ալ եկաւ բազմութեան առջեւ  
« ակնջեա ի վար իմացոց Ընծային  
« հասնիլը . բազմութիւնն ու Ակորը  
« ձգեցի տունս եկայ ' սնտուկը քակե-  
« լուեա մջի Ընծաներն ասոր անոր բաժ-  
« նելու համար . այս բույ բերան Ակորը  
« (ջ'եմ գիտեր ինչ մտօք) ելեր Ընծային  
« անուանը ' հետ սնտուկ բառն ալ ար-  
« տասաներ ու ժողովրդեան պատճառ  
« Է տուեր որ ելնեն գանեա տանս դուռն  
« ափ առնեն, կարծելով թէ ժամակոջին  
« պատմած Ընծան մեր սնտուկին մեջը  
« պահուրտած է :

« Վերի թաղէն բռնէ մինչեւ ի վար ,  
« հին ու նոր դրացիք իրենց լաճերով

« ամենուն ձեռքն ալ մեյմեկ կոփ' եկան  
« վրաս թափեցան : Ես որ բանին եռ-  
« թիւնը չ'եի գիտեր ' բազմութիւնը  
« հեռիէն տեսածիս պէս հարկադրեցայ  
« ներս մտնել ու դուռս խփել. այս գոր-  
« ծողութիւնս ժողովրդեան կասկածն  
« աւելցուց ու ամենքն սկսած *Ընծան*  
« կ'ուզենք պոռայ. հագարներով ան-  
« զամ երդում պատառ... չ'է, մտիկ  
« ընող չը կայ. ճարս հատաւ դռանս  
« փականքը կոպեցի' ոտքս ալ անոր  
« ետին դնելով երսս ի վեր պառկեցայ,  
« կինս ու մեծ տղաս քովերս անցան'  
« միւս տղաքս ու թոռներս ալ կռնակնին  
« մեզի տալով' բոլորնիս նեղըզնեղը շա-  
« րուեցան. թոռներես մեկուն անխոհե-  
« մութեամբ եւ դրսի հրուած ուժէն երե-  
« րալով երբ որ դուռս կիսախուփ ըլլա-  
« յու մազ էր մնացեր, այն ատեն *Թէնէ-*  
« *քէճի* ' Գեմայ ախպարը հասաւ, որ դի-  
« պուածով մեր քաղաքն եկեր ու այն

« օրն ալ տանս մեջ կը բաներ, այս  
« մարդը մեզ իրարու՝ եւ ամենս ալ  
« դռանը լէհիմով աղեկ մը փակուց  
« ու գնաց :

« Զորս օր նօթի - ծարաւ եւ այսպիսի  
« հանգստութեամբ կենալէն ետեւ հինգե-  
« րորդին՝ վերէն, վարէն, տանիսի վրայէն,  
» պատուհանի ծակերէն սկսաւ հեղեղի  
« պէս մարդ թափիլ վրանիս՝ *Ընծայ*  
« կանչելով . Քեմալ ախպարը նորէն  
« հասաւ եւ առանց իմ հրամանի լէ-  
« հիմընէրը քակեց ու նստաւ, ալա՛խ  
« պէլասինի՛ վէռսին էնծէնիզի՛ն տա՛  
« մէմլէքէթլէռինիզի՛ն տա՛ սիզին տա ,  
« յիօփօ՛լի յիօփէքլէռի՛, պի՛ռ տահա  
« յիօլզօլնօլզօ՛ւ յիօ՛ւմէյօլմ՛, ըսելով  
« երեսըս կը նայեր՝ այն ժամանակը որ  
« սնտուկը դռնէս դուրս հաներ կը տա-  
« նէին . երբոր Քեմալ եւ Մարկոս  
« ախպարտոց հետ մինակ մնացինք՝ հար-  
« ցուցի թէ ինչպէս եղաւ այս բանը .



« խեղճ Քեմալը հայերէն կը պատմեր  
« թէ տփոցն ուտելէն ետեւ *խավեղան*  
« ու մորուքը գրաւ ձգեր բազմութեան  
« ձեռքն ու այն պայմանաւ ներս մտեր է.  
« ականջը խօսի *Ընծային* որ այս Քե-  
« մալին բերնէն վար ջ'ընկաւ, մինչեւ  
« հիմա նոյն եւ նման բաներ կ'ըսէ որ  
« ջ'եմ հասկընար, Մարկոս ախպարէն  
« իմացայ որ կ'օրհնէ եղեր, ես ալ հանեցի  
« ոսկի մը տուի որ երթայ, ասանկ անոյշ  
« լեզու մարդ ջ'էի տեսած :

« Չ'եմ գիտեր թէ ինչ տեսակ գիրք  
« դրած էիր *Ընծայի* սնտուկին մեջ, յուս-  
« սամ թէ բացուելէն յետոյ ժողովուրդը  
« պիտի հասկընայ ոչինչ տեղն իրար  
« անցնիլը, երբ մանաւանդ թղթէն ու-  
« րիշ բան չը գտնէ ղրկածիդ մեջ :

« Երկար գրելու ժամանակ ջ'ունիմ ,  
« Առաջնորդն ուզեր է պիտի երբամ :

Ծառայ ծառայից եւ ծովու կաւ  
ԳՐԻԳՈՐԻՍ ԹԻԱՆՇԱՀԵՆՑ : »

ՆԱՄԱԿ Զ.

Վանանդ , գաւառ Հայաստանեայց .  
Առ ընծայատու ի Փարիզ (միջնորդութեամբ  
Մանտալեանի) ,

« Մեր ստորագրեալքս , Հայրենակից  
« մեծի Հօրն Բարկենի ազատասեր Կա-  
« թողիկոսին ամենայն Հայոց (ընդ նո-  
« սին եւ քոյղ) , արք եւ կանայք , ծերք  
« եւ տղայք , հարսք եւ փեսայք , նշան-  
« եալք եւ նշանուելիք , ծնեալք . եւ ծը-  
« նելիք , մորուսաւորք եւ անմորուսք ,  
« նինարք եւ գերք , հիւանդք եւ առողջք  
« մեռեալք եւ կենդանիք , դատարկաշը-  
« ջիկք եւ գործունեայք , զողք եւ յափըշ-  
« տակեալք , ուղղաքայլք եւ կաղք ,  
« միականիք եւ երկականիք , կոյրք եւ  
« աջաւորք , զիտնականք եւ տգետք ,  
« լեռնարնակք եւ քաղաքարնակք , հա-  
« մեստք եւ պատըռտածք , եւ այլն .

« Գլուխնիս հող ու մոխիր ցանած ճի-  
« տերնուս ի վար գերեզմանին դռները կա  
« իսած, անվարտի եւ բոկոտն՝ երեսնիս  
« դռներուդ սեմոցը քսելով կը ծընրադ  
« ըենք առաջի Տերութեանդ եւ կը գան-  
« զատինք որ զմեզ անհնարին դառնու-  
« քեան մեջ ձգեցիր՝ մոռանալով մեր  
« նուաստութիւնը որ տարիներէն ի վեր  
« մտքերնիս դրած էինք ըստ ամենայնի  
« հնազանդիլ քումդ իմաստութեան :

« Ի՞նչ էր արդեօք մեր յանցանաց ըս-  
« կիզքն որ այս կերպիս դատապար-  
« տուեցանք ու հեռացանք քու տեսչու-  
« քենէդ, քու բրինձը մեր սեղանէն կամ  
« մեր սեղանը քու բրինձէն զատելու  
« միտքն զոր մը չունեցանք. ինչ էր ու-  
« թեմն պատճառը որ զմեզ մոռցար ու  
« Ընծայ մը չը դրկեցիր. մի՞ բէ մեք եւս  
« արժանի չ'էինք այն ամէն շնորհաց որ  
« Հայոց ամբողջ ազգն երջանկութեամբ

« կը վայելէ քո՛ւ Ընծայիդ միջնորդու-  
քեամբ. եթէ դո՛ւ գմեզ չը սնուցանես  
« ո՛ր կերթայ մեր վիճակը. գաւառիս  
« մեջ սգաւորաց բազմութիւնը շատ է  
« հեծեճանքն այլ անպատմելի . ասոնց  
« բոլորն Ընծայի ջարժանալնուս ծագե-  
« ցաւ. զոնք մեկ օրինակ մը դրկած ըլ-  
« լայիր մեր սիրելի գաւառակից Թոռա-  
« քին հետ՝ այս բաները չ'եր ըլլար, ան  
« որ երկու տարի Փարիզ կեցաւ ու գա-  
« ւառես ելած ու՛ ելնելիք դղմեղեն՝ ա-  
« նուշներուն բոլորն այլ ծախելէն ետեւ  
« ստակներն այլ չ'առած նորբզնոր շապի-  
« կին կեսնայ քեզի ձգեց ու անանկ եկաւ :  
« Հիմա ո՞վ պիտի հոտ գայ եւ Ընծայ  
« ուզէ. ահա՞ղ որ մեզի մօտ չ'ես, ամի-  
« սոս որ մենք այլ քինէ հեռի մնացեր  
« ենք, եղո՛ւկ որ այսչափ տարիներէն  
« ի վեր ընծայ մը չը դրկեցիր :  
« Սրտերնիս դողի եւ սարսափի մեջ է  
« որ չ'ըլլայ թէ մեր իրաւանց վրայ այլ

« անհոգ կենալով կտակդ չ'ըրած մեռ,  
« նիս ու օրինաւոր ժառանգութիւննիս  
« օտարաց ձգես :

« Իշխանք եւ մեծամեծք տառապեալ եւ ան-  
« ընծայ գաւառիս Վանանդայ (ի Հայս)

« Կարապետ (իշխան) Գեղալեան.

« Բանիկ (իշխան) Կարճըթիւննց.

« Սարգ Զէյթինկերեանց.

« Գեորգ Տեր Կօկօզեան (առաջին գարտուղար  
« ծնեալ յօր Զատկի.

« Սպիտակ Սելումուրեանց (պատանի ծնեալ  
« ի թուականի 1779.

« Ըսկառաճի Վասիլ (գրագիր նամակիս  
« 33 տարեց) :

« Գրեցաւ ի գիւղն Ոթմուս : »

« Կարծեօքս Ընծայի պարտկե-  
րին հետը խօսած ատեննիս բազ-  
մութեան մզէն իս տեսնողներ ըլլա-  
լու են , որոցմէ քանի մը Պօլսեցի  
տունս եկան ազաչելու որ գրած

նամակնին խմինիս մէջը դնեմ ու  
քեզի զրկեմ որ հեղինակին յանձ-  
նես . ընդունելու պայմանս այն  
եղաւ որ իրենց նամակներուն օրի-  
նակները հոս դնեմ ինչպէս որ կը  
տեսնես :

ՆԱՄԱԿ Է .

« Աղերսագիր երից Ազգաց ,

« Սա Հայերուն չը կրցինք հասկը-  
« ցրնել որ Ընծան աշխրհքիս մեջը  
« գտնուող չորս ազգաց համար գրուած  
« է, եւ ոչ միայն իրենց համար . ասոնց  
« քրին մեծութիւնը տանելու բան չ'է,  
« քաղքիս նեղ ճամբաները մեկ դի'  
« լայներեն ալ անցնելու դժուարու-  
« թիւնք պակաս չ'են, ամեն տեղ գոգ-  
« նոցնին փռած գրերնին ալ մեջտեղը  
« դրած՝ գմեղ ծաղրելէն եւ իսկան կան-  
« ջելէն ուրիշ բան մը չ'ունին, *խօրսամ*

« հայերեն կարդալ չը գիտնայնիս երես-  
« նուս պիտի գարնեն. մեզի ինչ, ամօ-  
« քը հօրերնուս ու պապերնուս է որ  
« ջ'են սովրեցուցեր, եւ ինչ գիտեինք  
« որ *Ընծան* հայերեն գրով պիտի  
« տպուեր. ալ սը տեղնիս եկաւ եւ այս  
« ծաղրասէր ազգին քիքն իջեցնելու  
« ճար մը մտածեցինք. *էսնաֆ օտասըն*  
« ժողվըվեցանք օրենք մըն ալ դրինք՝  
« որ հինգ օրեն ետքը հայերեն կար-  
« դալ չը գիտցօղը *Կօլսուղ ըլլայ* :  
« Անզգամ Հայք այն ատենն ալ չարու-  
« քիան գտան ընելու, ո՞վ կ'երեւակայեր  
« որ պայմանեալ օրեն առաջ կ'երթան  
« ու ոմանց *մինաէրը* դառցնելով դժուա-  
« րութիան մ'ալ կատելցընեն... մտիկ  
« ջ'ըրինք. տարինք գլուխնիս *մէնկէնէն*  
« դրինք ու կարդալը սովրեցանք,  
« մտանք *Ընծային* ծայրեն մեկայեն  
« ելանք, *ի'ամիամէն դաթօլիդի'* եւ ա-  
« սոնց մօտ քանի մը բառերեն ուրիշ

« ամենն ալ... ափսո՛ս, ո՞վ գիտեր որ  
« լեզուն ալ հայերեն է :

« Իրան է որ այս բանին վրայ Հայք  
« լեզունին քիչ մը քաշած՝ խահվեներն  
« ու ճամբաները զմեզ հանգիստ կը բո-  
« դուին, բայց վերջի դժուարութիւնն  
« առելի քան զառաջին ըլլալուն՝ ստի-  
« պուեցանք իրենց դուները մուրաց-  
« կանի պէս անդադար գարնել՝ այն  
« չափ որ երեսնիս կաշի չը մընաց .  
« այլ աս օրերս՝ զար ենք մընացեր  
« երեսնին նայելու, *փրութ* կ'ընեն ան-  
« դին կը դառնան . կը գարմանանք որ  
« ձեր իմաստութիւնը չը գուշակեց այս  
« դժուարութիւնները եւ զմեզ այս վի-  
« ճակը ձգեց :

« Ուստի՛ պաղատանօք կ'աղաչեմք  
« եֆենտիութեանդ որ՝ կամ հրաման  
« տաք ձեր պատկերին որ մեզի բա-  
« ցատրե (Ընծային մջինները) եւ կամ  
« (որ ուզածնիս է) Յունարեն, Տաճկե-



- « րեն եւ. Երրայերեն տպել տաք ու.  
« մեզի դրկէք որ սա չը պիտու. Հայոց  
« քիթն ու. բերանը դրխմենք :  
« Մընամք Էֆենտիմ :

Քեխիայք երից Ազգաց,  
Յոյն, ՄԻՍՕԲՕԻԼՕՍ  
Հրեայ, ՊԷՆ - ԻՍԽԱԿ  
Տաճիկ, Զիւդ...

- « Գրուեցաւ Ըստամալօյ ի Քրզ քուլէ,  
Լօտոս հովին երկրորդ ժամուն : »

#### ՆԱՄԱԿ Ը.

- « Պատուելի մեղաւոր եւ Քրիստոսով  
փրկուելիք,  
« Եթէ միայն առ. Հայ ազգ ուղղած  
« քլլայիք Ընծանիդ դեռ. եւս ներելի  
« կարծուէր, իսկ Յոանաց եւ. Հրեից հետ  
« երկայն - քարակ խօսելնուդ ետեւ, մեզի  
« փիսք մ'ընելով անձնելնիդ ապացոյց  
« մը կրնայ սեպուիլ թէ քրճըփո.իկ մար-  
« դու. տեղ դրած էք գմեզ. արդեօք այս  
« լոուքեան պատճառը Գամաղիկի

« խօսքէն առաջ կը գայ՝ թէ մեր անուան  
« ականջնուդ եռք եւ մորուքնուդ ոջիլ  
« ձգելէն . ըսել ջ'ենք ուզեր թէ գրածնիդ  
« անիրաւ ե, որովհետեւ այդպիսի տը-  
« տըռտուք տրամաբանութեանց վրայ  
« վիճելու սովորութիւն ջ'ունինք, բայց  
« իբրեւ որդիք Հայկայ՝ գրոց մեջ ու-  
« նեցած ազգային տեղերնիս օտարաց  
« ինչոն գոհենք : Ժամերէն դուրս վորն-  
« տուելնուս ետեւ գրենոց մջէն ալ ելնել,  
« մտ կըլլելու ապուր ջ'ե . ինչ ըսել ե,  
« Հրեաներու ջափ մլ ջը կանք . ոմանց  
« Աբրահամ, ոմանց Սեխբեստրոս,  
« ոմանց ալ Լուսաւորիջ, ամենուն մե-  
« կէն Բաղկեղոնի (փոխանակ կոռա-  
« րարքն ի) սուրբ հարքն ըսելով քթեր-  
« նուն կը բռնէք ծակէ ծակ կը դիմեք  
» եւ ո՛ջ Մելքիսեղեկին ո՛ջ ալ անոր  
« նախորդին ու յաջորդին խօսքը յիշե-  
« լով՝ մանաւանդ քիթուպոջով՝ սանկ մը  
« կ'ընէք՝ քովերնուս կ'անցնիք կ'երթաք :

« Իրաւ ե որ մենք Սևետարանէն  
« ջ'եղած բաներուն ականջ ջ'ենք կա-  
« խեր եւ անկէ դուրս ելլողը՝ թէ Պապ,  
« թէ Պօղոս եւ թէ յերկնից հրեշ-  
« տակ եւ այլն, ամենն ալ կը դըռըշ-  
« մենք, բայց այս դրութիւնն զմեզ  
« ջ'արգիլեր ազգային իրաւունքնիս  
« պահանջելու : Գժարնիս եկածին ամե-  
« նէն մեծն այն ե որ զացեր օտարաց  
« դռներն ընկեր՝ լայկան պապուկի պէս  
« կրօնք մը կը մուրաք. ինչ հարկաւո-  
« րութիւն կար ատոր համար ելնել  
« Սևետարանը խստորի պճեղի մը պէս  
« բերան առնել ու շողութնուղ Պապ  
« Պապի վրայ վազցընել, անոր պոչին  
« ծարովն ալ ազգին աչքը հանել :

« Ըսենք թէ Հայութիւննիս պատճառ  
« մըն էր առեցութիւննիդ մեր վրայ  
« շարժելու, բայց եւրոպիոյ մեջ միլիօ-  
« նաւոր փոօղեստանդ կան որ դարերէն  
« ի վեր քթերնուղ տակը նստեր փռնկ-

« տայով հոգինին կ'ելնե. ատոնց դուռն  
« ինչո՞ւ ջ'եք ջայեր. բայց ասոնք ալ  
« մեկ դի :

« Հրամանքնիդ գիտնայու. եք որ  
« Հայկ Նախահայրնիս փռօղեստանդ էր  
« ուստի եւ. ապստամբ ընդդեմ պատկե-  
« րին Բեյայ. գիտնայու. եք նաեւ որ ար-  
« իւնը գլխէն ի վեր շրջան մ'ըրած օրը  
« տամարը բռնեց ու ելաւ. սատկըցուց  
« զայն ու. բաղեց, զանկն ալ օրհնեց :  
« Արդ' եթէ բոլոր Հայք իրենց երանելի  
« Նախահօրը հաւատքին մեզի պէս  
« հետեւեին, ինչո՞ւ ձեզի նման օտար  
« որդիք պիտի ծնեին կամ առանց  
« կրօնքի մնային. բայց հիմա եղածն  
« եղած է. մեր ձեռքն իրաւունքն ու  
« Հայոց Զորէն ուրիշ բան չը մընաց,  
« եւ մենք ձեզի պէս ուստոյ ուրացօյ  
« ջ'ենք' այս օրերս մանաւանդ շնոր-  
« հակալ ենք այդ *Ընծային*՝ որ քանի  
« մը հարիւր հազար անձինք ետին

« առած բերաւ եկեղեցնոս մեջը ձգեց  
« գնաց . գանգատի տեղ մը չ'ունինք ,  
« միայն թէ կ'աղաչենք որ Ընծաներն  
« իրարու ետեւէ չը դրկեք ու քիչ մը  
« շունջ առնելու ժամանակ թողուք  
« մեզի . առ այժմ քսանի չափ պատ-  
« րաստ ժամեր ապսպրեցինք Ամերի-  
« կայէն , վասն զի շինելու ժամանակ  
« չը կայ . ան ալ չ'ենք մոռնար ըսելու որ  
« մեզի հետ թղթակցութիւն ընելը դադ-  
« րեցնէք եւ իսկոյն իմացընելու բարե-  
« հաճիք ' որ եթէ ուրիշ Ընծայ մըն ալ  
« ունիք դրկելու ' քանի մը հազար ժամ  
« ալ ապսպրենք :

« Զենք յուսար գձեց տեսնել , անդին  
« գացած ժամանակնիդ պոչով ու կօտօ-  
« շով բարեկամաց իմացուցէք Թոնկրա-  
« կեցոց հետը հաշտուելնիս :

Ծառայ Աստուծոյ

ԱՆՕՐԻՆԵԱՆՔՍ : >

ՆԱՄԱԿ Թ.

« Առատողորմ Հայր ,

« Ոչինչ տեղը սրտերնիս թուղ հանեց  
« այդ թերմանշ Ընծային լուրը . աջուրնիս  
« ծովերուն վրայ՝ նաւահանգստե նաւա-  
« հանգիստ երթալով հոգի չը մընաց  
« վրանիս . այդ՝ անունը պակսելու՝  
« Փարիզին շոգենաւը Յրբ պիտի հասնի  
« հոգի . մեր հոգերուն վրայ Երկընդոս  
« բերանն ալ բացուիլն եր պակաս . . . .  
« ինչո՞ւ պատուհանեն դուրս կը նայինք  
« եղեր , ինչո՞ւ կերակուրնիս ուշ կ'ե-  
« փենք եղեր , ինչո՞ւ տղաքնիս երեսի  
« վրայ ձգած կը լացընենք եղեր , ինչո՞ւ  
« սա , ինչո՞ւ նա , քան դադարում ըսուած  
« բանը չը կայ հոգի , զոր ենք մընացեր  
« երերալու , աչք բանալ չ'են իտար .  
« այս օրերս ալ ելեր բան մըն են հաներ՝  
« սանկ քայէ , գլուխդ մ'երերցնէր ,  
« ձեռքդ քաշէ , ատանկ ինչո՞ւ կը նայիս ,

« ալ ինչ գիտնանք հոգի . առակ չը  
« մընար որ չը կանչեն, աչուրնոն  
« կ'երեւայ ինչ կ'ըլլայ չ'ենք գիտեր :  
« Հրամանքնիդ կրնանք երեւակայել  
« որ խելուրնիս շոգենաւին ու մտուրնիս  
« Ընծային տուած ատեննիս' Փարիզէն  
« եկած Փառապառայը ֆիստանները ,  
« աղամանդեայ մատնիները , ծաղիկ-  
« ներն ու ապարանջանները , Փանթօֆ-  
« լաներն ու գարիֆ գարիֆ շալերը'  
« սանկ աչուրնուս առջեւը կեցած'  
« բերներնուս ջրերը կը վազեր . ուստի  
« մենք ալ կ'ելնէինք անոնցմով կը հա-  
« գուէինք , կը սգուէինք , կը գարդա-  
« ըուէինք եւ իրարու այցելութեան կեր-  
« քայինք . ամեն անձի սովորութիւն չ'է  
« նե' բնական է որ մատանին ցոյց տա-  
« լու համար ճկոյթ մատը տընկէ , նոյն  
« ոճով ալ գլխուն վսեմ եւ վայելուեջ  
« դիրք մը տայ , քայուածքը փոխէ եւ  
« այլն : Մենք ալ այս մտքով դուրս

« ելած ատեննիս՝ շարժուն ընթացքով  
« մը՝ մատերնուս ծայրերովն ալ ֆիս-  
« տաններնուս քովերէն բռնած՝ կը քա-  
« լիինք ու մարդու քովէն անցած ժա-  
« մանակնիս հինգ կամ վեց ոտնաչափ  
« հեռիէն ամէն զգուշութիւն կ'առնէինք,  
« որպէս զի Ֆիստաններնուս տակէն  
« դրուած քոխնօլիւնանէրը ասոր անոր  
« զգեստը չը պատուեն . երբեմն ալ՝  
« բազմութեան ճամբայ տալու համար  
« ամենայն քաղաքավարութեամբ դի  
« մը քաշուած կը կենայինք՝ հրամեցէք  
« էֆէնտիմ՝ ըսելն ալ ամենեւին չը մոռ-  
« նալով :

« Այս երեւակայութեամբ այնպիսի  
« կերպ մ'առինք որ տներնուս մեջ  
« առաւօտէ մինչեւ իրիկուն աշխարհք  
« պտըտելէն եւ իրարու մընաք բարով  
« ըսելէն ետեւ՝ հոգնած դադրած կը  
« զայինք դռներնուս առջեան որ տներ-  
« նիս մտնենք ու քիչ մը հոգի առնենք...



« Հիմա դռանը ներսի կողմէն ջալել-  
« նուս համար ելնել՝ օրը բիւր հազար  
« անգամ *փրոթ* ու հն հն, հի հի ընել  
« պէտք էր, չ'եղաւ որ այս կատակն-  
« րուն պատճառը հասկընայինք թե  
« ուստի առաջ կը գար . վայ մեզի,  
« մջերնուս շատը ծեծի փետի տակ՝  
« կրակ կայ պոռացին, ոմանք երկը-  
« նուն թողուեցան, ոմանք հացի պնակ-  
« ներուն տակը մընացին, ոմանք ալ  
« Փրկիչ գացին դտուրնին ջուրը ղնելու:  
« Սյս բաներուն ալ չը դիմացանք,  
« յոյսերնիս խաֆեսներուն ետին մընաց  
« եւ ելանք Փարիզցի Հայ որսալու .  
« — Քն, նայէ կտրիճ մը փրթաւ դի-  
« մացեն, քալուածքեն կ'երեւայ թե  
« Փարիզցի է. ես երթամ դռան ջուանը  
« քաշեմ՝ դուն ալ աջք ըրէ .  
« — Զը նայի նե ինչ ընեմ .  
« — Զը նայի նե... մեղայ չը նայի նե  
« կանչէ ...

- « — Հն. չը նային, խելքս թռուցեր  
« եի... դոն կանչէ .  
« — Ես կանչեմ... զիս ո՞վ գիտցար .  
« — Դուն իս ո՞վ գիտցար անանկ է  
« նէ՛ որ ետեւես ընկեր կանչէ կ'ըսես .  
« — Չայնս մարած է անոր համար  
« կ'ըսեմ հոգի, չ'է նէ ինչ կ'ըլլայ եղեր .  
« — Աչքդ ալ կուրցած չ'են եմ .  
« — Բն, հոգի եկաւ հասաւ, կանչէ .  
« — Աչք ըրի չը տեսաւ .  
« — Բն հիմա կանցնի կ'երթայ կանչ...  
« իշտ . իշտ...  
« — Ի՛շտ, դուռը բաց է, ճանըմ Մը-  
« սիս կամաց մը ներս մտէք բան մը  
« պիտի հարցընենք .  
« — Հանըմ, ձեզի ծառայելն ինձ  
« երջանկութիւն է, հրամեցէք .  
« — Նախ ես առաջ կ'աղաչենք որ  
« զմեզ չը մեղադրէք .  
« — Ոչ երբէք Հանըմ, հրաման մ'ու-  
« նիք նէ պատրաստ եմ .

« — Սա, իբր... դուն ըսէ քա Ջիպայ,  
« ջ'ըսես... հապա ինչո՞ւ կանչեցիր .

« — Մեղայ ' դուն պիտի ըսէիր նե —  
« քան ո՞ւսկից ելանք աս մարդը կանչե-  
« ցինք, անքը չը դառցըներ ու երեսնիս  
« նայիր —, եւ ես' միս մինակ չը կան-  
« չեցի ես .

« — Երկուքս միատեղ ' ըսել կ'ուզես,  
« բայց դուն պիտի ըսէիր .

« — Ես քեզի բան մը չը խոստացայ  
« ըսելու, դուն քեզի բաներ կը հանես .

« — Քան ճանրմ, հիմա դուն ես եղեր  
« ես եմ եղեր... բայց կ'աղաչեմ Մըսիւ,  
« վեր հրամեցեք .

« — Գլխուս վրայ Հանրմ, բայց  
« խնդրեմ որ ներողամիտ ըլլաք ' որով-  
« հետեւ քառորդեն աւելի կենայու ջ'եմ .

« — Մեր հարցընելիքն այդ չափ ալ  
« չը քշեր, բայց ինչո՞ւ կը փութաք .

« — Այսօր Փարիզի սուրհանդակին  
« քանի մը նամակ ունիմ հասցընելու .

« — Ա՛յ, սա՛ն Փարիզին անունը կը  
« լսենք նե սրտերնիս բան մը կ'ըլլայ.  
« — Ինչո՞ւ համար Հանրմ .

« — Սա, իքին համար... բայց հիմա  
« հրամանքնիդ ալ ինչ պիտի ըսեք...  
« սա... ճանրմ Մըսիս, խօսքս քովերնիդ  
« մընայ, երիկս իմանայ նե չ'ըրածը  
« չը մընար .

« — Հանրմ, ըսածնիդ ասկե դուրս  
« չ'ելնելուն ապահով եղիք, բայց կ'ա-  
« դաջեմ սա հարցընելիքնիդ ըսեք ' որ  
« ուշ չը մընամ .

« Հրամանքնիդ Փարիզէն եկաք .

« — Հոն գացած չ'ունիմ, ինչպէս  
« կընամ գալ .

« — Անանկ ե նե Փարիզէն գալիք  
« Ընծայից վրայ տեղեկութիւն չ'ունիք .

« — Ո՞րպէս Ընծաներ, ինչ ըսել  
« կ'ուզեք .

« — Ճանրմ սա Փարիզի Պատասխանի  
« հօր դրկելիքը .

« — Բառ. մը հասկըցայ նե պանիր  
« ըլլամ Հանրմ .

« — Քն վնյ իմ վրաս, աշխարհք  
« բունտ ելեր Ընծային կ'սպասե' հրա-  
« մանքնիդ ջ'եք զիտեր . անցեայ օրը  
« Մըսի. Բասգայն ալ ըսաւ. որ ճամբու.  
« դրուեր են .

« — Հասկըցայ, սնտուկ մը քիւֆիւ-  
« րով լեցուն Ընծայ, նա ջ'Է ուզածնիդ.

« — Ատ ինչ կ'ըսեք... այդպիսի բան  
« տեսնուած կանց որ ըլլայ.

« — Ասանկ երբայ նե կատաղութիւն  
« նին յագեցնելու. համար այն քիւֆիւր-  
« նէրուն հետը մեյմեկ ալ ընդանօք  
« պիտի դնեն ու այնպես պիտի դրկեն.

« — Է՛յ այդպիսի վտանգաւոր բանը  
« կը հագնուի .

« — Ըսելիքնիդ աղեկ մը բացարտեք  
« նե դեռ. ես հասկընամ . ինչ ըսել  
« կ'ուզեք Հանրմ, միտք մ'ունենայու.  
« Էք' որ ջ'եմ կրնար ըմբռնել .

« — Ճանրմ սա ֆիստան , Փանթուֆ-  
« լայ եւ .....

« — Հրամանքնիդ Ընծան անդ կեր  
« պիւ հասկըցեր էք ... ուրեմն մընաք  
« քարով ....

« — Կեցէք ճանրմ . Մըսիւ... Մըսիւ...  
« Մըսիւ.....

« Մեր կարծեօքը , խենթերու հետ  
« խօսք չ'ունիմ ըսաւ ու գնաց .

« Ի՞նչ ըսել ուզեց , չ'ենք գիտեր ,  
« բայց եթէ անոր ըսածին պէ՞ս սըն-  
« տուկներնիդ քիւֆիւրով լեցուցիք ու  
« ճամբու դըրիք , ինչ անխելքութիւն ...  
« ինչ հարկաւորութիւն ունեինք ատկեց,  
« երբ մեր ' մանաւանդ մեր Օտաւար-  
« ցոց քով ամենէն գերագանցները կը  
« գտնուին , որ Փարիզի մեջ այնպիսի  
« գործարաններ ոչ եղեր է եւ ոչ ըլլալիք  
« կայ . լսած ալ ենք որ այդ տեղի ջրերը  
« մեր կողմերէն ելած քիւֆիւրներուն  
« փայլունութիւնը չ'են կրնար տալ :

« Ուրեմն կ'իմացնենք Ձեր մեծու-  
« թեանը որ եթէ այդպիսի հարկիք  
« ջ'անցնելու բաներ ճամբու դրիք,  
« աղեկ է որ յետս դառնէք եւ այդ  
« կողմի Հաշ ըսուած վաճառանոցը  
« դնէք ու ծախէք եւ անոնց տեղը Փա-  
« րիզի մօտաներեն ' մանաւանդ Լիօնի  
« մետաքսեղինաց գանազան տեսակ-  
« ներեն օր առաջ դրկէք . ապահով  
« եղիք որ հագուիլն ալ աղեկ սովորած  
« ենք ինչպէս որ վերն ալ ծանուցինք :  
« Մընամք անհամբեր սպասողք ջնաշ-  
« խարհիկ ընծյախցդ :

Վասն Արմենուհեաց

Ք. ՄԱՆՈՒՇԱԿ.

Ձ. ԶԻՊԱՅ ,

Գրեցաւ ի Թօփի - Քափու  
Տանդէլաներուն սղած օրը : »



ՆԱՄԱԿ Ժ.

« Պօլիս 6, Երկուշաբթի 1856 :

« Ամենագրոցաշակերտ Տէր մեր ,

« Շնորհակալ ենք որ մեր օգուտը  
« մտածելով ձեր պատկերն առանց  
« մորուքի դրկեր էիք, որպէս զի ամեն  
« մարդ (ինչպէս որ սովորութիւն եղաւ  
« այս տարիներս) Փարիզի մօտային  
« հետեւի եւ մեզի ալ զործ մը բացուի ,  
« որ շատոնց՝ մանաւանդ քանի մը  
« տարիէն ի վեր՝ մորուք մորուքի  
« վրայ բող տալով ածելինիս ժանգո-  
« տած, խանութնիս ալ անապատի  
« դառձած էր. այս մարդոց մէկ հատիկ  
« իրաւունքը Փարիզի մօտան ըլլալն էր.  
« հիմա՛ փառք Ընծային այն բաները  
« չը մընաց եւ մորուքներուն մագերը  
« դնելու տեղ չ'ունինք. բայց մէկ բան  
« մը կայ որ մեր վիճակն առջինէն չը  
« տարբերեր՝ եւ շատ ժամանակ կը



« կորուսենք առանց մեծ բան մը վաս-  
« տրկելու. մեր ծուխերը՝ ձեր պըլըք  
« ջ'ունենալը կռահելով՝ սկսան իրենցն  
« այ ձերինին նմանեցնելու համար վար  
« առնել. ասոնց չը կըրցինք հասկը-  
« ցընել որ ձերինն ածիլուած է. ասանկ  
« պինտ - գլուխ մարդոց՝ մանաւանդ  
« իրենց հին եւ գեշ սովորութեանը հա-  
« մար առաջուց գգուշութիւն ջ'առնել  
« նիդ գմեզ գարմացուց. վասն զի ասոնք  
« ելեր կը պնդեն որ *ճըմպըղով* առնել  
« տուած էք. առաջ՝ մեկ առուր մեջ  
« վարսուն հոգի կ'ածիլէինք, հիմա՝  
« քանի որ այս մօտան ելաւ՝ պըլըք  
« փետքելէն աչք վերուցած ջ'ունինք,  
« մեկ առուր մեջ հագիւ թէ չորս հոգի  
« կ'ածիլէինք, ասանկով հալերնիս ո՞ր  
« պիտի երթայ ջ'ենք գիտեր : Ամենքս  
« միատեղ մտածեցինք որ հրամանք-  
« ներնուդ միջնորդութեամբը Փարիզի  
« մեջ *Ֆասպոիքա* մը բանանք ու մորուք-

« ներուն մագերը (պըյըքներեն յոյս ջը  
« կայ վասն զի խիստ կարճ են) հոտ  
« դրկենք որ բարակներեն *բահնօլինա*՝  
« հաստերեն ալ գեղեցիկ եւ մօտա *ֆըռ-*  
« *չանէր* շինուին :

« Հիմա լսեցինք որ մորուքի եւ պը-  
« յըքի սանտը ծախօղները ոտք են ելեր  
« ու մեր արհեստակից Գիրիօս էնտրօ-  
« փիօփուլօսի խանութը փլուցեր ու  
« մորուքը ածիլօղի մը ճտեն ձախ-ավել  
« մըն են կապեր՝ քանի մը սանտը ալ  
« վրան խոթեր ու բող տուեր են :

« Աս ալ նոր բան մըն է մեզի համար որ  
« մտքերնուս ջ'եր անցներ. եթէ այս մար-  
« դիկ ելնեն մեր խանութներն ալ փլցը-  
« նեն՝ մորուքները նորեն պիտի սկսին  
« բուսանիլ ու մեր առաջարկութեանը  
« հետ՝ ձեզ ու ձեր *Ընծան* ալ պիտի ավը-  
« լեն ու գերեզմանի փոսը ձգեն :

« Մնամք առ այժմ :

« Նամակիս վերը կերպիւ մը  
խոստացած էի բանս ընդարձակել,  
բայց այս պատճէններով աւելի կը  
զատես քան ըսելիքներովս. կարճ  
ընեմ ուրեմն եւ խնդրեմ որ իսկոյն  
սրատասխանես :

Ըսածներս մի մոռնար :

Բարեկամդ,

Թ. ԿԸԿՈՒԻԿԵՍՆ : »

Նամակներուս կապոցը ճամբու դնելէս  
յետոյ վրաս թող մ'եկաւ ու յանկարծ  
հիւանդացայ, բժիշկներէն ոմանք աշ-  
խըրհքիս մջի ամէնէն վտանգաւոր հիւան-  
դութիւնները գլխուս կը դիպէին. ասոնց  
մջէն մէկը որ ի Փարիզ ուսած էր, իմա-  
ցաւ որ եղելութեանց վրայ չտիպողանց  
հոգ ընելս եղած էր հիւանդութեանս

պատճառ . ուստի ամէնայն զգուշութիւն  
առնելով զիս առողջացուց . այսու ամէ-  
նայնիւ քսանըչորս օր անկողինէս դուրս  
չ'ելայ , եւ ահա այն օրէրն էր որ նա-  
մակիս պատասխանը հասաւ Փարիզէն :

Առ Թ. Կրկոբիկեան  
ի Կ. Պօլիս :

Փարիզ, Հոկտեմբեր 1856

Բարեկամ,

« Նամակդ ու մէջիններն առի  
« ժամանակին, եւ կը փութամ պա-  
« տասխանել . Ընծային վրայով  
« հարցուցած տեղեկութիւններդ  
« ինծի համար խիստ դժուար են  
« ընդարձակ գրել : Նախ՝ Ընծային  
« երեսը տեսած չ'ունիմ եւ չ'եմ

« ալ փափաքիր տեսնել. երկրորդ՝  
« Հեղինակ զՓարիզ ձգած ու չեմ  
« գիտեր ո՞ր զեղը գացած, է վասն  
« որոյ ոչ նամակդ իրեն կրնամ  
« հասցնել եւ ոչ Ընծադ ուզել. իսկ  
« անոր տարիքին, պատկերին  
« նմանութեանը, կրօնքին եւ բնա-  
«ւորութեանը վրայ համառօտա-  
«բար կրնամ գրել, ան ալ միայն  
« քու սիրուդ համար, եթէ ոչ՝ անոր  
« անուամբը նամակս արատելու  
« միտք չունիմ:

« Հեղինակիդ տարիքին վրայ  
« ստոյգ եւ որոշ տեղեկութիւն մը  
« չ'ունիմ, բայց լսած եմ՝ եւ Փը-  
«ռանսըզ ըլլալու հանութիւն ու-  
«նեցած ատենն ալ կարդացած եմ  
« Իժայէզոս անուն օրագրին մէջ՝

« որ իր ծնդեան վկայագիրը Ազեք-  
« սանդրիոյ գրատան մէջ երեք ու  
« ֆռանսրդ ըլլալու փափաքը չ'է  
« կատարուեր, իսկ Վէնէտկի մա-  
« մուլէն ելած՝ Օտայարցի եւ պա-  
« տըռտած անանուն (Պոյալը Վա-  
« տարի զաւակինն է կարծեօքս )  
« Տետրակի մը մէջ նշանակուած  
« տեսնօղնէր ալկան՝ որ Բաբկէնի  
« մօրը ծնած իններորդ օրը Վա-  
« նանդի հրապարակին մէջ փիշքի  
« խաղացած ատենը՝ մետասանե-  
« րորդ նշանածն ելեր ու բազմու-  
« թեան առջեւը կից սաւանդ ա-  
« րեւուն ջի փռած ինչոն դուրս  
« ելար՝ ըսելով ապտակ մըն է  
« իջեցուցեր՝ մատովն ալ ճակտին  
« վրայ մուր մըն է քսեր, Հեղինա-

« Կըղ ասոր վրայ՝ ետին չընայելու  
« սլայմանաւ՝ ելեր Հոռմ է վազեր,  
« ճակտին մուրը լուալու մտօք :  
« Այս հաշիւին մէջ Վէնէտիկի  
« վանքէն առաջին անգամ վրոըն-  
« տուելուն ու Հայերը Հոռմ տա-  
« նելէն ետեւ, զլուխը հարիւր մէկ  
« օր ու կէս քսանըվեց ժամ վեց  
« հազար ութսունը մէկ վայրկեան  
« վեզար դնելուն ժամանակները  
« չ'են սեպուիր :

« Օտար երկրի մէջ հայերէն  
« պատարագած ու վեց միլիօն ութ-  
« սունըհինգ անգամ շարժած ժա-  
« մանակներն ալ հոս նշանակելու  
« հրամանը չը կրցի առնել իրմէ,  
« օտար լեզուաւ պատարագած  
« օրն ալ ներկայ գտնուողներուն

« ամէնն ալ մեռեր ու իրենց թաղ-  
« ման ծառայութիւնը Հեղինակիդ  
« վրայ են ձգեր: Այս անսղալ հա-  
« շիւր Յունական խղճի մտօք  
« նշանակեցի, որուն առջի վայր-  
« կեանք՝ մեռեալք գմեռեալս թա-  
« ղելու օրէն սկսած է:

« Իսկ եթէ քու կողմէդ անզգու-  
« շութեամբ փոքր սխալմունք  
« մ'ընես Հեղինակիդ անզին վայր-  
« կենացը մէկին վրայ՝ ալ ես  
« անպարտ եմ, մեղքը ճիտդ:

« Պատկերին ըստ ամէնայնի  
« նմանութեանը խօսք չ'ունիմ,  
« (եթէ տեսածս է) այսու ամէնայ-  
« նիւ քանի մը սլակասութիւն ալ  
« վրան կը նշմարեմ. առջեւը սե-  
« ղան մը, անոր վրայ մեծ ամանի



« մը մէջ փխլավ, սամանին քով  
« շիշ մը գինի՝ կաւածն ալ քովն  
« ըլլալու պայմանաւ, ետեւէն  
« անկլիան շուն մը՝ հնդկահաւին  
« ոտքէն կրծած ու ձեպէն դուրս  
« քաշելու դրութեան մէջ ...

« Ալ Հեղինակիդ այն վայրկենի  
« թթուըցուցած դէմքին նկարագ-  
« րութիւնը քեզի կը ձգեմ :

« Չի մոռնաս ասոնց վրայ կո-  
« տրտած անոռ մ'ալ ետին դնե-  
« լու<sup>1</sup> : Ասոնցմէն ուրիշ պակա-  
« սութիւն չ'եմ տեսներ :

- 1 « Եգիպտացի այլագագ առջին՝ Հայու  
« պատարագ ճեւացուցած ատենը՝ երեւելի  
« գերդաստանէ Հայկայ գաւակ երիտասարդ մը  
« վրայ հասած եւ արող գլխուն իջեցուցած է.  
« այս Ազնի անձին անունը նամակիս վերջը կը  
« նշանակեմ որ երբաւ երիտասարդ ժամա-  
« նակին ըրած ազգասիրութիւնն ստուգես :

« Իսկ անհաստատ բնաւորու-  
« թեան ու կրօնքին վրայ՝ քովէս  
« բան մը չ'աւելցրնելով՝ սն պատ-  
« մութիւնն ընեմ որ իմանաս՝ թէ  
« ինչ քահանանէր կան աշխրքիս  
« մէջ եւ ինչէ՞ր կ'ըլլան եղեր բարե-  
« սլաշտ հասարակութենէ ծածուկ :  
« 1819ին..... գիշերը . Հօլան-  
« տացի քովէթ մը կը գայ երկու-  
« թը կը ձգէ Թօմիհանէ ըսուած  
« Թաղին առջեւը . նաւապետը դի-  
« տակն ի ձեռին դէպ ի յԻւսկիւ-  
« տար կը նայի լուսանշանն ստու-  
« գելու . Ժամանակ է , կ'ըսէ մէկէն  
« ի մէկ , իսկոյն լուսաւոր կան-  
« թեղ մը կը քաշուի կայմին վրայ  
« եւ երկու վայրկեանէն ետեւ կը  
« մարի վար կ'իջնայ :


« Նաւապետն ամէն զգուշութիւն  
« առնելով՝ մակոյկն ու թիակ-  
« նէրն առաջուց սելի ներկած էր .  
« նաւաստիք իրենց համար պատ-  
« րաստուած սեւագոյն զգեստնէ-  
« րով հագուելէն ետեւ՝ ամէնքը  
« սպառազէն՝ մակոյկը կը նետուին  
« ետեւնուն ալ նաւապետը . . .

« Լռութիւնը կը տիրէ , նաւաս-  
« տեաց ու նաւապետին աչքը դէպ  
« ի ծովափն Իւսկիւտարու դառ-  
« ճած՝ երկրորդ նշանը վերջապէս  
« երիտասարդէ մը կառնեն ( որ նա-  
« ւակի մը մջէն կը տար ) ու լռու-  
« թեամբ եւ անհագին մթերուն  
« մջէն կ'անցնին կ'երթան .

« Սահմանեալ տեղին դեռ չը հա-  
« սած պատուհանէ մը տրուելիք

« Երրորդ նշանին քիչ մը կ'սպա-  
« սեն . նաւապետը դիտակովը կը  
« նշմարէ վերջապէս սոյն օրիորդը'  
« որ ձեռքի Երագով երխին շարը  
« պիտի բռնընկցըներ... Երկու  
« զինուոր յանկարծ մակոյկին մէջ  
« կը ցաւթքեն , մէկ ձեռքով Խրեր-  
« նին միւսով ալ ատրճանակնին  
« բռնած ' ձայն չ'ուզէր չ'է նէ . . . .  
« . . . . . »

« Ելի՛ր սրդիս . . . ուշ մընացիր . . . . »



Արիւն քրտինքի մէջ արթնցայ... Մայրս  
տեսայ որ « ելի՛ր որդիս » կը կրկնէր...

Ի՞նչ էր այս երազը՝ եւ ի՞նչ պատճա-  
ռաւ, չ՛եմ գիտեր. բայց սա՛ զիտեմ եւ  
ստոյգ է որ դռնէն դուրս ելնելէս ետեւ  
երկու մարդու հանդիպեցայ ի Պէյօղլու,  
(դերձակի մը խանութին առջեւ). մէկը՝  
(զոր չ՛էի ճանաչէր) պարկ մը գրքուկ  
կոնակն առեր ու ասոր անոր բան մը  
կ'ըսէր, իսկ միւսը մեր դպրոցի դասա-  
տունէրէն մէկն էր. ասոնց խօսած ժա-  
մանակը դասատուին ձեռքը սեղմելու  
մտօք մօտեցայ, եւ դեռ բարիլոյս չ'ըսած  
վիճէրնին լամբնալուն սպասեցի որ այս-  
պէս կը խօսէին .

— Խատուտիկ ու պատկերազարդ  
գիրք ունիմ .

— Նայիմ ի՞նչ է .

— Գրե՛նոց ամէնը թանգադին կը գրտ-  
նայիր, նայիմ ասոր ի՞նչ խօսք ունիս .

— Գինը քանի՞ է .

- Ստեղծիչը ծախսուիր .
- Հասցա՛ .
- Ձրի կը բաշխուի .
- Պատճառ՞ .
- Պատճառ մատճառ չը կայ, անունը վրան է, Ընծայ .
- Ընծայ է նէ չ'եմ առներ .
- Կարդալու միտք ունիսնէ ստեղծառ .
- Վրան ճրի գրուած է, չ'եմ առներ .
- Առանց կողքի առ . . .
- Ճակտի վրան ալ այնպէս գրուած է .
- Ճակատն ալ կը սլատուեմ .
- Մջիննէրն ի՞նչ կ'ընես .
- Դու գնելու միտք չ'ունիս .
- Հեղինակն ալ ծախելու միտք չ'ունի .
- Կարդալու միտք չ'ունիս ըսել կ'ուզեմ .
- Հեղինակն ալ կարդացընելու միտք չ'ունի .
- Ինչո՞ւ համար .

— Վրան կարդա՛ գրուած չ'է.

— Մի՛ կարդար գրուած է°.

— Հապա ի՞նչ գրուած է.

— Ընծայ .

— Գնա՛ ըսածնէրս Հասունիգ պատմէ՛  
որ ցնծայ — .

Ըսաւ ու երեսս չը տեսած ելաւ գնաց :

Ընթերծողը կրնայ երեւակայել որ  
Ընծայի երազնէրովն այնչափ տառա-  
պանօք արթնցող անձ մը՝ ի՛նչ յօժա-  
րութեամբ կը ձգէ դասատու բարեկամը  
(մանաւանդ այն կերպիւ մերժելը տես-  
նելէն յետոյ) եւ կ'երթայ ընծայարաշ-  
խին կը մօտենայ հետաքրքրովթիւն մը  
յադեցընելու համար :

Վերջապէս առինք ու կարդացինք...

Երկու Յառաջարան, եօթը յօդուած,  
Վերջարան մըն ալ ետեւէն. որը 1812ին  
տպուած, որը 1840ին, որ մէկն ալ օրա-  
գրաց ու ժողովոց մէջ արդէն կարդա-

ցուած՝ ուրիշ բան չը կայ..... Ասոնց  
ամէնուն տակը Համախոհ Մխիթարեանց  
Վենետկոյ ստորագրուած՝ Հեղինակին  
ունեցած ու չ'ունեցած անուններն ալ  
ետեւէն կարդաւ շարուած :

Այսպիսի նորակերպ տողի մը նշանա-  
կութիւնն ի միտ առնելը մեր կարողու-  
թեանէ վեր ըլլալը կը խոստովանինք .  
վասն զի՝ եթէ Մխիթարեանց միտքը  
զրքին պատասխանատուութիւնն իրենց  
վրան առնելով ըստ սովորութեան (լու-  
թեամբ) մտ ալ անցաւ ըսել էր, եւ կամ  
թէ այս անունը փոխ տալով Հեղինակը  
պատասխանատու կեցընելէն եւ հարկ  
եղած ատենն անոր վրայ ցնթած ածա-  
կանը դնելէն ետեւ՝ անիկայ մեզնէ  
շատոնց ի վեր գատուած է ըսելով՝  
դարձեալ նոյն մտ ալ անցան ըսել էր  
նէ, ինչո՞ւ համար կը թողուն զՀեղինակ  
որ անհամաձայն եւ անխոհեմ կերպիւ  
կ'եւնէ՞ ըսի կ'ըսեմ եւ ըսելէն չ'եմ դա-



դարիւր, ուրիշ տեղ մ'ալ՝ գրեցի եւ կը  
գրեմ կ'ըսէ :

Իսկ եթէ մինակ Հեղինակն էր պատաս-  
խանատուն՝ ի՞նչ յարկաւորութիւն կար՝  
այդ Մխիթարեան պատկառելի անունը  
յանդգնութեամբ մէջ բերել ու անոր  
բարոյական պատիւն ազտեղել :

Մխիթարեանց ու համախոհ ընկերին  
անել եւ պտուտաւոր ճամբուն եթէ քիչ  
մը մօտենանք դատելու համար՝ մենք  
ալ պիտի կորսուինք. թո՛ղ որ Հեղինակը  
կամ վախէն եւ կամ տկարութենէն՝  
առջի քաջութիւնը մոռնալով ինքզինքը  
Մխիթարեանց զօրաւոր անուամբը պա-  
տըսպարեր ու պատասխանատուութեան  
հրաժարականն ելեր ի սկզբանէ առերէ-  
ասոր ի՞նչ ըսենք, ի՞նչպէս հասկընանք,  
հասկընանք ալ նէ որի՞ պոչէն ըմբռնենք,  
այսպիսի գրքի մը կատակէն ուրիշ ի՞նչ  
պատասխան կրնայինք տալ :

Իսկ որ այդ գիրքը կարգացիք եւ

Հեղինակին ըսածին համեմատ՝ անշուշտ  
ամէն տողէրուն մէջը մէյմէկ իմաստ  
դտաք ու դատեցիք. մենք ատոնց վրայ  
ծաղղէն ուրիշ ի՞նչ կրնայինք աւելցնել :

Գիրք մը որ Հայ, Յոյն, Հրէայ եւ այլն,  
աղգ չը թողուր՝ ամէնուն ալ սրկէց ելլի՝  
հունա նատէ, այդ կուժը ձգէ՝ միւսն առ  
եւ ասոր նման հաղար ու մէկ խրատներ  
եւ սպառնալիք՝ հայերէն գրով, հայերէն  
լեզուաւ խօսելէն ետեւ՝ Յետ բանիցս  
ըսելով Հայոց բերնին կղպանք մը կը  
դնէ որ այս բանին վրայ օտար աղղաց  
հետ ամէնեւին չը խօսին. այսպիսի  
համախոհական գիրք մը՝ կատակէն ուրիշ  
ինչի՞ արժան էր :

Մխիթարեան համախոհ մը կ'ելնէ  
հոռմէականութեան հրաւիրող գրութիւն  
մը կը հրատարակէ եւ սոչը նեղի մտած  
ատենը՝ ես Հոռմեական հայոց համար  
գրեցի կ'ըսէ : Հոռմեական հայերը հոռ-  
մէականութեան հրաւիրող ծաղրալի

գրութիւն մը՝ կատակէն ուրիշ ի՞նչ բանի արժան էր :

Մխիթարեան համախոհը Հայոց վրայ ամէն չարիք կը դնէ ու գրիչը Փարիզի Հայոց վրայ կը դառննէ եւ առակ չը թողուր իրենց կանչելէն ետեւ՝ անոր ալ գոհ չ'ըլլար՝ կ'ելնէ ( իբրեւ կարեկից ) էջմիածնայ վարդապետի մը խնդրոյ մէջը կը մտնէ ու գայթակղութիւն բառը վերջապէս կ'արտասանէ, քանի մը կէտ ետեւէ դնելն ալ չը մոռնալով, մուրառ տին կը հասնի :

Պատասխաննիս ատոր իրաւ կամ սուրբ ըլլալուն վրայ չ'է, այլ այնչափը լաւ գիտենք՝ որ ժողովուրդք ամէն ատեն պատրաստ են գայթակղելու, եւ անոր համար իրենց արգելք մը չ'է դրուած . բայց վարդապետին պարտքն է չը գայթակղեցընել զժողովուրդս, եւ իրեն այնպէս հրաման եղած է :

Իսկ եթէ մեք զՄխիթարեան համա-

խոհը դատելու միտք ունենայինք. Նախ՝  
իրեն պիտի հարցնէինք թէ մեր ընտանի  
խնդիրներուն մէջը մտնելու արտօնու-  
թիւնն ուտի՞ տա՞ծ է .

Բ. Նոյն արտօնութիւնը մեզ ալ կը  
տայ՞ որ Միխիթարեան համախոհի մը  
Վէնէտիկէն փախուցած աղջկանը պատ-  
մութիւնն ընենք .

Գ. Արտօնութիւն կը տայ՞ որ այն  
աղջկան համար վանքի տպարանին  
մէջը (մեծաւորէն ու միւս անդամներէն  
ծածուկ) տպուած շինծու անցադրին  
պատմութիւնն ընենք .

Դ. Արտօնութիւն կը տայ՞ որ ատեն  
անցնելէն ետեւ՝ աղջկան ոտքը Լոմ-  
պարտիա դպածին պէս՝ կառաւարութենէ  
բռնուելուն , եւ անոր անցադրին ինչ  
կերպիւ տպուիլը հաստատուելէն ետեւ...  
Միխիթարեանց շիտթ ատենին վճարած  
տուքանաց հաշոյն հեար՝ անուրանալի  
պատմութիւնն ընենք .

Ե. Արտօնութիւն կը տայ՞ որ դատարկաշրջիկ եւ ծնաքայլ Մխիթարեան համախոհի մը տարինէրով Փարիզի մէջ ըրած անառակութիւննէրը տեղէրովն ու վկայութիւննէրովը ցոյց տանք ու մտաւած տակին հաշիւն ու պատմութիւնն ընենք :

Զ. Արտօնութիւն կը տայ՞ որ Մխիթարեան համախոհի մը երիտասարդութեանը ատենին երկու տեսակ հանդերձից նկարագրութիւնն ընելէն ետեւ մէկովը Ֆօպլասին միւտովն ալ Գառդիւֆին ունեցած նմանութեան պատմութիւնն ընենք ու այս օրուան ունեցած իր պատուաւոր եւ Առաջակայ վիճակովը մերկ անդամ ազգին Առջեւը խայտառակենք. . . . .

Է. Արտօնութիւն կը տայ՞ որ Պօլիսի Մխիթարեան համախոհաց վրայ քիչ մը խօսինք ու Ազգայնոց կամացը դէմ եւ մեր աչաց առջեւը տնէրուն մէջ ելնել մտնելով իրենց ըրած անզգամութեանց

մանրամասն նկարագրութիւնն ընենք :

Բայց մենք այսպիսի խնդիրնէրու մէջ մտնելու եւ Մխիթարեան համախոհին օրինակաւ ժողովրդեան մէջ գայթակղութիւն ձգելու միտք չ'ունինք, միայն թէ այս վերջիննէրուն համար Գերապայծառ Հասունին խրատ կը տանք (ան ալ իր կրօնակցաց օգտին համար) թէ՛ կա՛մ իւր իրաւասութեան տակը դանուօղ Քահանայքն (ըստ արեւելեան սովորութեան) ամուսնացնէ, կա՛մ անոնց համար վանք շինէ ու երկաթեայ պատահաննէրուն առջեւն ալ մէյմէկ դինուոր կայնեցընէ, եւ կամ ամէնքը ժողովէ Վէնէտիկ դրկէ..... :

Բայց ինչու՞ մեր նպատակէն շղերով ուխտէրնուս դէմ ըրինք, մեր գրութեան հիմը եւ միտքը դատել կամ պատասխան տալ չ'էր, այլ միայն կատակել զհամախոհս Մխիթարեանց, ուրեմն շարունակենք մեր խօսքը :

Անանուն Փէփէ Մարիձայի մը զաւակ  
եւաւ տեւորակ մը հանեց, որով անուն  
եւ ածականազարդ չարիք չը թողուց  
ազգին վրայ դրաւ, մենք ալ զհամախոհ  
մարդիկ կարծելով՝ ելանք ինքզինքնիս  
( եթէ ոչ անուշութեամբ գէթ իրաւամբ )  
բանաւոր կերպիւ պաշտպանեցինք եւ  
բացէ ի բաց մերժեցինք այն անարժան  
հայհոյութիւնքն որ իրենց սքեմին ու  
տպարանի մամուլնէրուն տակէն ելած  
էին. հիմա նոյնը նորոգող եւ Ընծայի  
հագուատով դռնէրնիս նորէն չալօղ  
կաշի-երես համախոհը՝ կատակէն ուրիշ  
ի՞նչ պատուոյ արժանի էր :

Սաոնց ամէնը մէկ դի .

Համախոհաց ծիծաղելի Սատուածա-  
բանութեան առանց մատչելու ( որն  
որ արհեստնիս չ'է, մօտենալու միտք ալ  
չ'ունինք ) Վուսաւորչական հայերս բիւր  
անգամ ըսինք՝ թէ մեք զԲաբկէն անմեղ  
անձ՝ մանաւանդ հայրենասէր մարդ մը

կը ճանաչենք, ա՛ն էր որ իր ազգային  
ազատութիւնը պահել ուզեց, անոր ու-  
ղելուն եւ ի գործ դնելուն պատճառաւ  
է որ մինչեւ հիմա Հայոց ազգը կանգուն  
կեցած աշխրհքիս մէջ դոնէ ընկճեալ  
ազգաց թիւը կը համարուի. ըսինք նաեւ՝  
թէ մեք Նուսուորչականքս՝ ոչ միայն  
հոռմէականութեան պատրաստ չ'ենք՝  
այլ եւ Պապին անունը մեզի յիշած  
ատեննիդ վրանիս այնպիսի սարսափ  
մը կը դայ որ շատ անգամ ամիսնէրով  
ալ հիւանդ կ'ըլլանք. . . . . Մեր  
ըսածնէրը չը լսելու դարնօղ համախո-  
հին Ընծան՝ ի՞նչպէս կրնայինք ընդունել  
եթէ ոչ կատակաւ ։

Գիտենք որ յանուն Բաբկէնի վերի  
գրած յիշատակութիւննիս՝ Մխիթարեան  
համախոհաց իրաւունք սլտի տայ ամեղ  
ցըլեղ աստուածաբանութեանց թեր-  
թէրը նորէն դառճնելու եւ մեր մոլորու-  
թեան Տարեգրացը վերջի հատորնէրն



ընդարձակելու . բայց մենք ո՛չ այն կողմէրն ենք եւ ոչ իրենց տրամաբանութեանցը մտիկ ընելու գլուխ ունինք : Մեզի պէտք եղածն ու աղգային իրատւոնքնիս այն է՝ որ Բարկէն իր ատենին երեւելի Հայրապետն էր եւ տասնը հինգ միլիօն ժողովուրդի կը տիրէր , այնպիսի ժողովուրդի մը որ սրաէրնին իրենց Հայրապետին ավը՝ միշտ արխանին թափելու պատրաստ էին : Այսպիսի Հայրապետ մը երբ որ իմացաւ թէ Հայոց եկեղեցին ուրիշնէրէն կ'արհամարհուի , Լուսաւորչաց աւանդութիւնքն աղեկ մը բռնելուն ու իրենց կռիւնէրով քուէ ձգած Սահմանադրութիւնը չ'ընդունելուն համար , ա՛ն ալ իր նախորդաց ճամբուն մէջը դտնուելուն իրաւամբ՝ ելաւ բանդրեց զարհամարհողս . եւ աղեկ ըրաւ . իրաւամբ ըրաւ . այն ատենին համար իր պարտքն էր . չ'ըներ նէ շատերուն պէս աղգատեաց կ'ըլլար եւ

դժողքը կ'երթար..... Մխիթարեան համախոհք ասոր ըսելիք ունին<sup>օ</sup> . իրենց Պասլը , սա՛ ժամանակիս , միլիօն մը հաւատարիմ ժողովուրդ ունի նէ թո՛ղ հաստատեն՝ որ դրիչնիս կոտորտենք ու մէկ դի ձղենք... երկայն բարակ մտծել պէտք չ'է , համախո՛հք . դրէ՛ք , քահանաներն ալ մէջը դրէք... չը լեցաւ<sup>օ</sup>... կէս միլիօն ալ<sup>օ</sup> չ'եղաւ... վայ՛ ձեր թշուառութեանը... այդ պէս ըլլալը շատոնց գիտէինք . այսու ամէնայնիւ այս օրուան օրս կը դնէ կը վերցնէ . Հայաստանեայց Հայրապետ մը անկէց ի՞նչ վար տեղ ունէր : Արդարեւ կատակէն ուրիշ բանի արժանաւորութիւն մը չ'ունիք եղեր :

Հայոց եկեղեցին Բաբկէնին ըրածը տարուէ տարի նորոգելէն շատոնց դադրեցաւ , իսկ Մխիթարեան համախոհաց սեւաներկ վարադուրը տարին տասներկու ամիս քաշուած՝ մտիկ ընելով գլուխ-

նիս դդում դառձաւ... քաջութիւնը Մխիթարեան համախոհացը չ'է, բայց յանձանքը Հայոցն է որ քանի մը Տիտայական տրամաբանութենէ վախնալով՝ կապուած մընացին ու հերձուած անունը միշտ մերժեցին, ի՞նչ կայ այդ հերձուած անունին վրայ, եւ ի՞նչ ըսել է որ այդ չափ խըրտեր են ու չը կրցին օր մը ոտքի վրայ ելնելով ըսել թէ՛ այո՛, հերձուած ենք անոնցմէ որք եկեղեցինիս կ'արհամարհեն, թնչ անպատուութիւն կայ այդ անուանը մեջ... եթէ այսպէս ըսէին դուցէ իրենց պարծանք մըն ալ կ'ըլլար այն անունը, որով ոչ միայն զՄխիթարեան համախոհս թառալզոր բերած ու անել անդնդոց մէջը ձգած եւ ի թշնամեաց անդառնալի կերպիւ հեռացած կ'ըլլային՝ այլ եւ Եւրոպան ալ առաւել որոշ կերպիւ եւ ըստ ամէնայնի դատ ու առանձին ազգ մը կը ճանչնար զիրենք : Հիմա դո՛ւն ըսէ սրամիտ ըն-

թերծող, այս մտքով շողեալ աղգըդ՝  
հռոմէականութեան հրաւիրող անձանց  
սկաւառակնէրուն մէջը սլճեղ մը խելք  
կայ՞ . . . . .

Կատակէն ալ ուրիշ արժէք ունին՞ :

Մխիթարեան համախոհաց հազար ան-  
գամ գործքով ալ ցոյց տուած էինք որ  
մեք՝ թէ՛ Լուսաւորչական, թէ՛ Հռո-  
մէական եւ թէ՛ Սևտարանական հայքս՝  
մէկ սէրունդէ, մէկ ընտանիքէ եւ եղբայր  
ենք, մեր երակնէրուն արիւնը մէկ տեղէ  
կը բղխի եւ անոր անուամբը կը կան-  
չուինք, զիրար ճգելու եւ զիրար ատելու  
միտք չ'ունենալնիս՝ դեռ քսանըչորս  
ժամ չ'եղաւ որ հրատարակեցինք եւ  
ըսինք՝ թէ մեք ձեզի գործիք ըլլալէն  
եւ եղբայրնիս ուրանալէն կամ սպանե-  
լէն դադրեցանք եւ ուխտ ըրինք այսու-  
հետեւ ձեր ԾԻԾԱՂԵԼԻ վէճէրուն զոհ  
չ'ըլլալու . վասն որոյ չ'ենք ուզեր որ  
Մխիթարեանց համախոհներն ելնեն՝ ո՛ր

Եւ իցէ կերպիւ մեր ազգայնոց ներքին սէրն ատելութեան, կապակցութիւնը բաժանման եւ խաղաղութիւնը խռովութեան վտխելու պատճառ ըլլան. այսպիսի բանաւոր եւ պատկառելի բողոքնուս ընդդիմութիւն ընօղ Մխիթարեան համախոհը՝ կրնայի՞նք կատակէն ուրիշ բանով մը պատուել :

Ասոնք ալ մէկ դի .

Թո՛ղ ընթերձօղը Ընծայի յօղուածնէրն իրարու վրայ դիզէ ու խալկինի մը մէջ դնէ եւ ամէնավարպետ քիմիագէտի մը ձեռնատուութեամբ դտէ, թէ որ երբտասարդ Բանասիրի մը ներքին համոզմամբը մերժուած Հռոմէական պարզերը չ'եղնէ նէ կատակնիս ետ կ'առնենք.....

Գնա՛ Մխիթարեան համախոհ գնա՛ ներքին Համոզման Զերբորդ երեսի վերջին հինգ տողէրը կարդա՛... ա՛ն թող ըլլայ քեզի պատասխան, եթէ ոչ՝ այսուհետեւ քու արժէքդ կատակ է :

Մխիթարեան համախոհք .

Խօսքէրնիս Ընծային չ'է, վասն զի այն պատիւն անոր ընելու միտք չ'ունինք, եւ ուխտիւք կը խնդրենք որ անոր նման քանի մը հատ դրքէր դուրս հանէք որպէս զի ձեր ծիծաղելի դրութիւնը բոլոր ազգն աղելկ մը իմանայ եւ արժէքնիդ ճանչնայ :

Բայց ձեզի վերջին խրատ ըլլայ ըսելիքնիս, եւ երանի՛ թէ կարենայիք օգտել :

Մեք Հայկայ զաւակնէրս համոզուած եւ մտքէրնիս հաստատ դրած ենք՝ թէ մեր ամէն թշուառութեանցը միակ եւ առաջին ու վերջին պատճառ դուք ( եւ ձեզի նման ազգատեաց՝ թէ՛ Լուսաւորչական, թէ՛ Հռոմէական եւ թէ՛ Յունական քահանայքդ ) եղած էք . դուք էք Հայաստանն աւերակ դառնօղը . դուք էք միլիօնաւոր ժողովրդոց անհետ ըլլալուն պատճառը . դուք էք թագաւորաց թագն ու ժառանգութիւնն օտարաց ձեռ-

քը մատնօղը . դուք էք Հայկայ անմեղ  
դաւկնէրուն ետեւէն ու առջեւէն ընկօղը,  
որ գետէրուն, սառէրուն եւ դայլէրուն  
բերանը բիւր հաղարնէրով ձգելէն  
ետեւ՝ մընացածնէրն ալ իրենց Մարցը  
դրկէն յափշտակեցիք ու անոնց արտա-  
սուալից եւ սրտապատառ աղերսանացը  
ձայնէրուն ականջնիդ ու սրտէրնիդ  
խփելով՝ տարիք ձեր փառասէր ակըն-  
կալութեանց իբրեւ փոխարէն՝ դժոխա-  
որդւոց ձեռքը դրաւ ձեզիք . . . . :

Դուք էք որ Երեւելի եւ Աներեւոյթ  
ժողրալի խնդիրնէրով Ազգը ճղակտոր  
հանեցիք ու ընտանեաց մէջ հուր, սուր,  
բաժանում եւ ատելութիւն ձգելէն ետեւ  
աղգութիւննիս մահուան եւ գերեզմանաց  
դռնէրը հասուցիք :

Դուք էք նաեւ որ մինչեւ ցայս օր չը  
կշտացաք մեր արիւնը ծծելէն . . . . .

Ձեզ ասեմ ո՛վ համախոհք եւ գիշա-  
տիչքդ Հայկեան սեռին . անմեղաց

արեան շողին Սատուծոյ կենդանւոյն  
առջեւն ելած, Բնակութիւնն ձեր աւերակ  
լիցի ըսելու վրայ է..... Բայց մինչեւ  
այն ատենը՝ կատակէն ուրիշ բանի մի՛  
սպասէք. վասն զի անկէց ալ ուրիշ  
արժէք մը չ'ունիք :

ՎԵՐՁ



---

Փարիզ, Տպագրութիւն Արմ. Ի Տպար. Վալտերի:  
Paris. Typ. Arménienne de Walder, r. Bonaparte, 44°







